

Երեք շաբթուան դադարէ մը ետք, նախարարաց խորհուրդը երէկ Թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց ժողով մը, նախագահութեամբ Կօր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Ժողովին նախագահ Լահուտ, վարչապետ Հարիրի եւ պաշտպանութեան նախարար Խալիլ Հրրաուի խօսք առին եւ անդրադարձան Լիբանան - Քուէյթ յարաբերութիւններուն եւ սուրիական ուժերու վերադարձումը:

Ժողովը ապա քննարկեց օրակարգի հարցերը եւ տուաւ համապատասխան որոշումներ:

ՔՈՒԷՅԹ ԿԸ ՀԱՒԱՏԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԵՏ ՍԵՐՏ ԅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Կ'ԸՍԷ ԴԵՍՊԱՆ ՍԱՅԻՏ



Զօր. Լահուտ կ'ընդունի Քուէյթի դեսպանը

Լիբանանի մէջ Քուէյթի դեսպան Ալի Սիւլէյման Սալիտ երէկ այցելեց նախագահ Կօր. Էմիլ Լահուտի, որուն յանձնեց Քուէյթի ղեկավարութեանն բերանացի նամակ մը՝ Լիբանան - Քուէյթ յարաբերութիւններուն մասին:

Նախագահ Լահուտ Լիբանան - Քուէյթ յարաբերութիւնները որակեց եղբայրական եւ ըսաւ, որ անոնք կը բնորոշուին գործակցութեամբ:

Զօր. Լահուտ նշեց, որ նման յարաբերութիւններ այնքան ուժեղ եւ խորունկ են, որ չեն ազդուիր ընթացիկ հարցերէ: Ան գնահատեց Քուէյթի եւ անոր ղեկավարութեան գորակցութիւնը՝ Լիբանանի:

Հանրապետութեան նախագահը շնորհեց արաբական միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ նշելով, որ շրջանային կացութիւնը կը թելադրէ ամբողջը միասնականութիւնը: Ան նաեւ անհրաժեշտ նկատեց, որ շրջանցուի այն բոլոր վտանգները որոնք կրնան տկարացնել արաբները:

Զօր. Լահուտ ընդգծեց, որ Լիբանան կ'աշխատի, որ արաբական յառաջիկայ վեհաժողովը ըլլայ համախոհութեան վեհաժողով մը:

Իր կարգին, Քուէյթի դեսպանը ըսաւ, որ Քուէյթ չի հաւատար Լիբանանի հետ դիւանդիտական տագնապի մը, այլ սերտ յարաբերութիւններու: «Ինչ որ պատահեցաւ սխալ էր, եւ մենք եկած ենք կերտելու եւ ոչ քանդելու», աւելցուց ան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՊԸՐՐԻԻ

Դեսպան Սալիտ նաեւ այցելեց խորհրդարանի նախագահին: Ծար.՝ էջ 2

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՂՈՎՄԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւնը մը, գլխավորութեամբ՝ Կ. Կ. Կ. ներկայացուցիչ ընկ. Յ. Միսիբարեանի, Չորեքշաբթի, 19 Փետրուարին այցելեց Ղովմի Կուսակցութեան կեդրոնատեղիին, Ռատուէ եւ ընդունուեցաւ կուսակցութեան նախագահ Ժըպրան Արաժիի եւ գերագոյն մարմինի անդամներուն կողմէ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽԱՐԱՐ ՍԱԼԱՍԵԻ

Միւս կողմէ, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւնը մը երէկ այցելեց մշակոյթի նախարար Ղասսան Սալամի:

Հանդիպումին արձարձեցան շրջանային վերջին զարգացումները: Քննարկուեցաւ Պուրն Համուտի մէջ նախարարութեան կողմէ հանրային գրադարան մը հաստատելու կարելիութիւնները: Պատուիրակութիւնը նախարարին առաջարկեց Լիբանանի հնագիտական վայրերու նորոգութեան ծրագրի ծիրէն ներս փութացնել Այն ճաբրի հնագիտական վայրին վերանորոգութիւնը:

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ՇԱՀԵՅԱԻ 707.155 ՔՈՒԷՔ 49.8 ԱՌ ՀԱՐԻՐԻ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԵՐԿՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԵՒ Ս. ԴԵՄԻՐՃԵԱՆ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը երէկ (Երեւանի ժամով ժամը 18:00ին) հրապարակեց 19 Փետրուարին կայացած նախագահական ընտրութեան նախնական արդիւնքները:

Յանձնաժողովի նախագահ Արտակ Սահրադեան յայտարարեց, որ ընտրութիւններուն մասնակցած են 1 միլիոն 463 հազար քաղաքացիներ: Գործող նախագահ Ռուպէրթ Քոչարեանի խնամքով 707,155 ընտրող, որ կը կապէ քուէարկողներու 49,8 առ հարիւրը: Երկրորդ դիրքը կը գրաւէ Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան թեկնածու Ստեփան

Դեմիրճեան, որ ստացած է 400,846 քուէ՝ ընդհանուր ձայներուն 27,7 առ հարիւրը:

Սահրադեան նշեց, որ այս նախնական տուեալներուն հիման վրայ, նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլին կայացուցիչ անխուսափելի է: Մնացեալ քուէները բաժնուած են հետեւեալ ձեւով. Արտաշէս Գեղամեան՝ 247,360 քուէ (17,4 առ հարիւր), Արամ Կարապետեան՝ 41,683 քուէ (2,92 առ հարիւր), Կապուչի Մանուկեան՝ 12,988 քուէ (0,89 առ հարիւր), Ռուբէն Աւագեան՝ 5,073 քուէ (0,51 առ հարիւր), Արամ Սարգսեան՝ 1,633 քուէ (0,46 առ հարիւր), Արամ Յարութեան՝ 1,218 քուէ



ԱՊՀի դէտերը. Կեդրոնը՝ Եւրոյի Եարով կը պատասխանէ Լրագրողներուն հարցումներուն

(0,09 առ հարիւր) եւ Գառնիկ Մարգարեան՝ 855 քուէ (0,19 առ հարիւր): Աւելի ուշ տեղի ունեցաւ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նիստը, որուն ընթացքին որոշուեցաւ նախագահական ընտրութեան երկ-

րորդ փուլը կայացնել 5 Մարտին, առաջին ընտրութեանէն 14 օր ետք, ըստ ընտրական օրէնսգիրքին: Երկրորդ փուլին պիտի մասնակցին առաւելագոյն ձայներ ապահոված առաջին երկու թեկնածուները՝ Ռուպէրթ Քոչարեան եւ

Ստեփան Դեմիրճեան: Գնահատելով 19 Փետրուարին կայացած ընտրութիւնները՝ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահը ըսաւ, որ որեւէ նշանակալից Ծար.՝ էջ 2

ԴԻՄԱԳՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱՉՍ ՍԸ

ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆ ԻՐԱՔԻ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԿԸ ՀՐԱՀԱՆԳԷ ՊԱՏՐԱՍ ԸԼԼԱԼ

Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյն երէկ հանդիպում մը ունեցաւ բարձրաստիճան գինուորակներուն եւ խորհրդատուներուն հետ, քննարկելու համար գինուորական եւ քաղաքային պատրաստութիւնները, գործակալները եւ տեսնել

ամբերիկեան յարձակումի մը դէմ դնելու համար: Ինչ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Սատամ քաղաքական ու գինուորական պատասխանատուներուն անհրաժեշտ թելադրանքները կատարած է՝ պատրաստ վիճակի մէջ դնելու

համար Իրաքի բանակն ու ժողովուրդը: Ինչ աւելցուց, թէ քաղաքական ու գինուորական հրամանատարութիւնը խորհրդակցած են միջոցառումներու մասին, որոնք առիթ եւ կարելի

Ծար.՝ էջ 10

ԾԱՆՐԱԿՇԻՌ ԿԱՑՈՒԹԻՒՆ՝ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ԵՒ ԿԱԶԱՅԻ ՄԷՁ



Իսրայէլացի զինուորներ կը շրջագային Նապոլուսի փողոցներուն մէջ՝ ահուսարսափի մատնելով պաղեստինցի բնակիչները

Իսրայէլեան ուժերը կը շարունակեն լայնածիր արշաւը Համասի եւ պաղեստինեան արմատական այլ շարժումներուն դէմ՝ սպաննելով, վիրաւորելով ու ձերբակալելով անոնց հետեւորդները կամ ուժեղացող անոնց բնակարանները:

Համասի անդամ 24ամեայ Մուհամետ Ուֆահ սպաննուեցաւ Լիւր-յորդանի թուրքարմ գաղթականային մէջ ծայր տուած բախումի ընթացքին իսրայէլեան ուժերուն եւ պաղեստինցիներուն միջեւ:

Ծար.՝ էջ 10

ԿԵՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՇՈՒՐՁ

ԱԹԵՆՔ ԵՒ ԱՆԳԱՐԱ ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Յունաստան եւ Թուրքիա այսօր բանակցութիւններու պիտի սկսին այն դերակատարութեանց մասին, զորս իրաքացիները երկիր պիտի ստանան: Կիպրոսի ապահովութիւնը հայաթիւր համար, եթէ կողմն վերամիացնելու համար ՄԱԿի խաղաղարար ծրագիրը յաջողի: Յունաստանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնած է, թէ Անգարայի մէջ կայացուելիք բանակցութեանց պիտի մասնակցին նաեւ ՄԱԿի Կիպրոսի պատուիրակ Ալվարո տէ Սոբո:

Նախարարութեան բանքերը ըսած է, թէ բանակցութեանց առաջին օրը պիտի քննարկուի «վերամիացումէն ետք կողմն վրայ գտնուող զինուորական ուժերուն հարցը»:

ՄԱԿ կը պահանջէ, որ կողմն յոյն եւ թուրք կիպրական համայնքներուն միջեւ վերամիացման համաձայնութիւն մը գոյանայ մինչեւ Փետրուար 28, առիթ տալու համար, որ միացեալ Կիպրոսը Ապրիլին ստորագրէ Եւրոպական Միութեան անդամակցութեան համաձայնագիրը:

Յոյն եւ թուրք կիպրացի ղեկավարները Յունուարի կէսերէն ի վեր ՄԱԿի ծրագիրին շուրջ ձեռնարկած են բանակցութեանց, որոնք անել կացութեան մատնուած են:

Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բանքերը երէկ յայտնած է, որ յոյն-տես է ՄԱԿի ժամկետը յարգելու իմաստով՝ մկատի ունենալով, որ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքքաշ «քաղաքական լուրջ կամք չի ցուցաբերեր բանակցութեանց մասնակցի դադարու համար»:

Տենքքաշ բազմիցս գանգատած է, թէ յոյն կիպրացի բանագնացները կը մերժեն ընդունիլ ՄԱԿի ծրագիրին գծով իր առաջարկած փոփոխութիւններէն որեւէ մէկը:

Այստեղեկութիւն, բանքերը յոյս յայտնած է, որ բանակցութիւնները պիտի շարունակուին Փետրուար 28էն ետք եւ յանգնին համաձայնութեան մը, որպէսզի կարելի ըլլայ ծրագրուած ձեւով Ե. Միութեան անդամակցութեան համաձայնագիրը կնքել Ապրիլ 16ին:

Յունաստանի եւրոպական հարցերու նախարար Թասոս Եանիքսիս Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Յունաստանի կառավարութիւնը չի հաւատար, որ մինչեւ Փետրուար

Ծար.՝ էջ 10

ՊԵԹԸԼ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՐՐԻԻ ԵՒ ՀԱՐԻՐԻԻ



Դեսպան Պեթըլ այցելեց վարչապետ Հարիրիին

Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթոն Պեթըլ երէկ հաստատեց, որ Ուաշինկթըն յանձնառու կը մնայ Լիբանանի գերիշխանութեան եւ անկախութեան պահպանման:

Դեսպան Պեթըլ երէկ դեսպանատան մէջ պատուիրակութեան ընկերակցութեամբ այցելութիւններ տուաւ խորհրդարանի նախագահ Նէպիի Պըրրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ամերիկացի դեսպանը նշեց, որ սուրիական ուժերուն վերադաստորումը կարեւոր քայլ մըն է եւ ըսաւ, որ Ուաշինկթըն կը վերահաստատէ իր կոչը՝ բոլոր օտար ուժերուն՝ հեռանալու Լիբանանէն:

Պեթըլ Պըրրիի եւ Հարիրիի հետ քննարկեց Լիբանան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւնները, շրջանային կարգացումները, Իրաքի տագնապը եւ պաղեստինեան շրջաններուն իրավիճակը:

ՔՈՒԷՅԹ ԿԸ ՀԱՒԱՏԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն

խագահ Նեպիի Պըրրիի, որուն փոխանցեց բերանացի պատգամ մը Քուէյթի ղեկավարութեան: Ան ըսաւ, որ Քուէյթի ղեկավարութիւնը յանձնառու կը մնայ Լիբանանի հետ սերտ յարաբերութիւններու պահպանման:

ԱՅՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախագահ գործ. Լահուտ երէկ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրոյդիէն տեղեկացաւ անոր Դամասկոս կատարած այցելութեան արդիւնքներուն:

Տեսակցութեան ետք, Ֆրոյդիէն ըսաւ, որ Լիբանան - Սուրիա համակարգումը պատմէ մըն է:

Նախագահ Լահուտ ապա իրեն այցելող երեսփոխաններուն հետ քննարկեց տարբեր շրջաններու մէջ փոթորիկին պատճառած վնասները առաւելագոյն արագութեամբ դարձանելու կարելիութիւնները:

ՄԱՀԱԶԴ

Տիր կարապետ Գոնիալեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Լուիզիլ Գոնաօղլանեան եւ գաւակունք Տէր եւ տիկին Միշէլ Մաքրիս եւ գաւակունք եւ համայն ազգականներ կը գովեն իրենց եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

ՅՈՎԱԷՓ ԳՈՆԻԱԼԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 14 Փետրուար 2003ին, Լոս Անճելըսի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Զորքշարթի, 19 Փետրուար 2003ին, Լոս Անճելըսի մէջ:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Կարապետ Գոնիալեանի բնակարանը, Անթիլիաս, «Նասիոնալ» շէնք, 10րդ յարկ:

● Հանգուցեալին հոգույն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Լուսին Քէօյլեան եւ գաւակունք Պերճ Տէր եւ տիկին Սամուէլ եւ Լենա Թօփալեան եւ գաւակունք

Տէր եւ տիկին Արա եւ Սիլվա Քէօյլեան եւ գաւակունք Քէօյլեան ընտանիք
Համարեան ընտանիք
Ճինպաչեան ընտանիք
Պատոյեան ընտանիք
Թօփալեան ընտանիք
Արսլանեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, քեռայրին եւ հարազատին՝

ԱՒԵՏԻՍ ԶԵՕՅԼԵԱՆԻ (Ծնեալ՝ 1942ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 20 Փետրուար 2003ին, Հարուն հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի վաղը՝ Ծարաթ, 22 Փետրուարին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ժուլիտե, «Սալիպա» շէնք, Բ. յարկ, Ծարաթ 22, Կիրակի 23 եւ Երկուշաբթի 24 Փետրուարին:

ՓՈԹՈՐԻԿԸ ԱԲԵՐՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԷ

Լիբանանը հարածող փոթորիկը կը շարունակէ աւերներ գործել յատկապէս լեռնային շրջաններու, Պեքաւի, հարաւի եւ հիւսիսի մէջ, ուր բազմաթիւ հողի սահանքներ արձանագրուեցան, բնակարաններ եւ ցանքեր ողողուեցան, ճամբաներ քանդուեցան՝ երթելէն ու փոխադրութիւնը կատարելով:

Փոթորիկին պատճառով նաեւ բազմաթիւ շրջաններու մէջ ելեկտրականութեան լարերը կտրուեցան՝ հոսանքէ կրկնով ամբողջ թաղամասեր:

● ՊԱՍԼ ՊԷՔԻ մէջ ելեկտրականութեան հոսանքը ընդհատուեցաւ, բազմաթիւ ինքնաշարժներ մնացին «բանտարկուած» շուրերու մէջ, իսկ ձիւնը փակեց շրջա-

նին մէջ լեռնային բազմաթիւ ճամբաներ:

Պեքաւի մէջ քաղաքային պաշտպանութեան ուժերու խմբակներ մնայուն կերպով աշխատեցան եւ օգնութեան հասանքաւորացիներու: Աշխատանքներուն հսկեց Պեքաւի նահանգապետ Անթուան Սլէյման:

● ՆԱՊԱԹԻԷԻ մէջ տեղատարափ անձրեւները փակեցին բազմաթիւ ճամբաներ: Վտանգաւոր չափերով բարձրացաւ Լիբանի եւ Չահրանի գետերուն ջուրերը:

Ապահովութեան աղբիւրներ յայտնեցին, որ ճամբաներ քանդուած են եւ պտղատու բազմաթիւ ծառեր արմատախիլ եղած:

● ՄԱՐԺԱՍՅՈՒՆԻ մէջ հսկայ տարածու-

թեամբ արտեր ողողուեցան՝ փճացնելով ցանքը:

● ԱՔԱՐԸ եւս անմասն չմնաց փոթորիկէն: Հաղորդուեցաւ, որ աւելի քան հազար քաղաքացիներ շրջափակուած են Սամաքիէի, Աքր Տահարիի, Քանիսիի եւ Արիտի մէջ, որոնք մեկուսացած են:

● ՔՈՒՐԱՅԻ մէջ ամէնէն մեծ վնասը հասաւ ձիթապտուղի ծառերուն:

● ՄԻՆԱՅԻ մէջ քաղաքապետարանի աշխատատեղերը անդուլ աշխատեցան փակուած ճամբաները վերաբանալու համար:

● ՊԸՇԱՐԸԻ մէջ փոթորիկը ծանր վնասներ հասցուց ցանքին, ճամբաներուն եւ ելեկտրական լարերուն:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն

դէպք տեղի չէ ունեցած, եւ ամէն ինչ ընթացած է բնականոն ձեւով՝ միաժամանակ նկատել տալով, որ իտէլական ընտրութիւններ ոչ մէկ երկրի մէջ տեղի կ'ունենան:

Հայաստանի նախագահական ընտրութիւններուն հետեւող ԱՊՀի դիտորդական առաքելութեան ներկայացուցիչները երէկ կատարեցին յայտարարութիւն մը, որուն մէջ նշեցին, թէ ընտրութիւնները ընթացած են Հայաստանի ընտրական օրէնքին համաձայն, եւ իրենց կողմէ կը ճանչցուին իբրեւ

ապատ, բաց, ժողովրդապարական, ապատ եւ օրինական:

ԱՊՀի դիտորդական առաքելութեան ղեկավար Եուրի Եարով յայտնեց, որ ԱՊՀի դիտորդայնացեալ ընտրական կեդրոնները եւ անմիջական ձեւով հետեւած են քուէարկութեան ընթացքին: Եարովի խօսքերով, Հայաստանի ընտրական օրէնսդրութիւնը կը համապատասխանէ միջազգային չափանիշներուն եւ ժողովրդապարական ընտրութիւններուն կայացման գծով կ'ապահովէ օրէնսդրական հիմք՝ ապատ,

արդար եւ թափանցիկ պայմաններու մէջ:

Եարով յայտնեց, որ ԱՊՀի դիտորդական առաքելութեան օրէնսդրութեան որոշ խախտումներ, որոնք պահուած ծայրի բնոյթ չեն կրած եւ հակառակ դրութիւն չեն ունեցած ընտրութիւններուն ընթացքին վրայ:

Եարով, գնահատելով ընտրական յանձնաձեռնութիւններու արհեստավարժ աշխատանքը, դիտել տուաւ, որ ընտրութիւններուն օգտագործուած են կարելի բոլոր միջոցները՝ ընտրութիւնները միջազգային չափանիշներուն համապատասխան կատարելու համար:

Ընտրութիւններուն մասին երէկ յայտարարութիւն մը կատարեց նաեւ միջազգային դիտորդական առաքելութիւնը, որուն մաս կը կազմեն Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական ղեկավարութիւնը եւ ԵԱՀԿի աւելի քան 200 դէտեր: «Տպարարութիւններս ընդհանրապէս դրական են. յատկապէս ուրախանալի են երեւոյթքը, որ բնորոշ հանրապէս վարչական աշխատանքները կը վաղէի կիսկան Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութեան ղեկավար Լորտ Ռասըլ Ճոնսընը մամոյն ասուլիսին ընթացքին: Ան անդրադարձաւ քուէներու հաշարկման ընթացքին եղած որոշ թերութիւններու: Ճոնսընը համոզուեց յայտնեց, թէ Հայաստան ունի հնարաւորութիւն եւ մարդուն՝ անթերի ընտրութիւններ կայացնելու համար:

Իր կարգին, ԵԱՀԿի դիտորդական առաքելութեան ղեկավար Փիթըր Ալթըր ընտրութիւններուն ընթացքը գնահատեց «հանգիստ եւ լաւ կազմակերպուած»: Ան ընտ-

րական գործընթացին դրական կողմերէն նկատեց ընդհիմադիր թեկնածուներուն կատարած անկաշկանդ քննարկումները, որոնք մասնակից ինք թեկնածուներուն միջեւ ընտրութիւն կատարելու յայն հնարաւորութիւնը, աշխուժ քարոզարշար:

Ըստ Ալթըրի, քուէներու հաշարկման փուլը ունէր որոշ թերութիւններ եւ նախընտրական գործընթացը, որոշ մարզերու մէջ, չէր համապատասխանէր միջազգային չափանիշներուն: Ան այսուհանդերձ թափանցիկ որակեց քուէարկութեան եւ հաշարկման գործընթացները ու բաւարար նկատեց ընտրութիւններուն արհեստագիտական նախապատրաստութիւնը:

Ա. Մահրաբեան ըսաւ, որ շատ յստակ էր դրական է ԱՊՀի դիտորդական առաքելութեան արժեւորումը՝ Հայաստանի նախապետական ընտրութիւններուն արհեստագիտական նախապատրաստութիւնը: Մասնակցեցաւ ընդհիմադիր թեկնածուներ: Հաւաքին մասնակիցներուն համոզումով՝ ընտրութիւններուն յաղթանակ արձանագրած է Ստեփան Դեմիրճեան:

Հաւաքին մասնակիցները ուղղուեցան դէպի Կեդրոնական Ընտրական Յանձնաձեռնովի կեդրոնատեղի, ուր անոնց ներկայացուցիչները հանդիպում ունեցան յանձնաձեռնովի նախագահ Արտակ Սահկարեանի հետ, որմէ ղիտորդական առաքելութեան գնահատականներուն մասին, ուր, դրական եզ-

Հայ Կաթողիկէ
ՄԵՍՐՈՊԵԱՆ
Արուեստից Վարժարան

1982 - 2002

Բացում Գ. երկամսեակի

Անգլերէն եւ Օտար Լեզուներ Համակարգիչ Դիմայարդարում
սկիզբը՝ 24 Փետրուար, 2003

Համակարգիչի լրի դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

260504
www.mesrobian.com

464 ՈՒՍԱՆՈՂ
14 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ԲԱՆԿԻ ԾԵՐԱՆՈՅ ՄԱՅՐԵՐՈՒ ԱՄՍՈՒԱՆ ԾԱՇԿԵՐՈՅՈՒ (BRUNCH) 22 ՄԱՅԻՍ 2003

ՍՏԱՅԱՆԸ

«ՍՍՏԵՍՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅԼ ԵՐԿԱՍՏԻՐՈՒԹԻՒՆԸ»

Յեղիծակ Ա. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծ Տաճար Կրկնորդ Անթիլիաս, 2003 (726 էջ)

14 ՓԵՏՐՈՒԱՐ - 20 ՓԵՏՐՈՒԱՐ 2003

ԵՐԿԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«ԵՐԿԻՐ» ԾԱԲԱԾԱԹԵՐԹԻ

- Հարաւային Կովկասը վիճակագրական հայելու մէջ էջ 7
- Բնակարաններ մանկատան սաների համար էջ 8
- Դասագրքերի խնդիր չենք ունենայ էջ 10
- Փակուղու սպանակիչը էջ 14

THE CULTURAL HOUR
@
HAIGAZIAN UNIVERSITY

Invites you to an illustrated lecture
On
THE ENDANGERED HERITAGE BUILDINGS OF BEIRUT

By
MONA HALLAK
(ARCHITECT)

Tuesday, February 25, 2003 - 7 p. m.
Haigazian university auditorium, Kantari.

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Համագումարից ընթացքից

Կազմակերպութեամբ Լիբանանահայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութեան և Հայկապեան համալսարանի Ընկերային Գիտութիւններու բաժանմունքին, երէկ, Հինգշաբթի, 20 Փետրուարի առաւօտեան ժամը 9:00ին, համալսարանին սրահին մէջ սկսաւ երկօրեայ համագումար մը՝ «Ընկերային Ծառայութեան աշխատանք. ներկայիս մեր դիմագրաւած հարցերը» թեմայով: Ամբողջ օրուան վրայ երկարող համագումարին ներկայ գտնուեցան ընկերային ծառայողներ, ընկերային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, դասախօսներ և ուսանողներ:

Համագումարին բացումը կատարեց Անի Պոլիտեխնիկի Գիտութիւններու և Կրթութեան Վարչարարական Ֆակուլտետի Հայ Համայնքի Ընկերային Ծառայողներու Միութեան կազմութեան հանգրուաններն ու անոր հետապնդած նպատակները: Ան ըսաւ, որ այս համագումարը մէկն է տարիներու ընթացքին այլ կազմակերպութիւններու եւ համալսարաններու հետ Միութեան կազմակերպած համագումարներէն, որոնք արծարծած են լիբանանահայ ընկերութիւնը յուլող հարցեր: Իր խօսքի արարտին, Ա. Պոլիտեխնիկի շնորհակալութիւն յայտնեց Հայկապեան համալսարանին և բոլոր անոնց, որոնք նպաստեցին անոր իրականացման:

Անդրադառնալով համագումարին նիւթին՝ ան ըսաւ, որ ընկերութեան փոփոխութիւններուն հետ քայլ պահելու համար ընկերային ծառայութեան ուսանողները և ընկերային ծառայողները պէտք է յատուկ կերպով մարզուին՝

Ծար.՝ էջ 10

«ՀԱՅԿԱԿԱՆ ՕՓԵՐԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ» ՆԻԺԻՆ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Շարունակելով հայկական եւ միջազգային երաժշտական երեկոներու «Երաժշտական ընդմիջում» շարքին պարբերական հանդիպումները՝ Հ.Բ.Լ.Մ. - Հ.Ե.Լ.Ի Անդրանիկ Մշակութային Միութիւնը երէկ Հինգշաբթի, 20 Փետրուարի երեկոյեան ժամը 8:00ին Հ.Բ.Լ.Մ. - Ի «Տեմիթեան» կեդրոնին մէջ կազմակերպեց երկրորդ երեկոյ մը: Հանդիպումին նիւթն էր «Հայկական օփերայի ծագումն ու զարգացումը», զոր ներկայացուց երաժշտագէտ դոկտ. Նորա Մալմանեան:

Հանդիպումին բացումն իրագործեց Ազնիւ Զանճեան, որ բացատրելէ ետք «Երաժշտական ընդմիջում» շարքին տուն տուող պատճառները, հակիրճ կերպով անդրադարձաւ օփերայի նիւթին՝ հայկական օփերային: Ապա ան ներկայացուց երաժշտագէտ եւ գրականագետ դոկտ. Նորա Մալմանեանի կենսագրական գիծերն ու անոր երաժշտական ասպարէզը:

Դոկտ. Ն. Մալմանեան դասախօսութեան սկիզբը ներկայացուց ընդհանրապէս օփերայ եզրին բացատրութիւնը, անոր համաշխարհային զարգացումը եւ երաժշտական յատկանիւնները: Ապա հակիրճ ակնարկ մը նետեց հայկական երաժշտութեան զարգացման գանձանի հանգրուաններուն վրայ՝ ներկայացնելով իւրաքանչիւր ժամանակաշրջանի բնորոշ գիծերը: «Բարձրագոյն հայ երաժշտական մշակութային աւանդը ամուր փաստ մըն է հայ ժողովուրդին երաժշտական կապուածութեան», ըսաւ ան:

Ինչ կը վերաբերի հայկական օփերայի զարգացման, դասախօսը նշեց, որ անոր մէջ մեծ է ազդեցութիւնը ոչ միայն արեւմտաեւրոպական եւ ռուսական դասական երաժշտութիւններուն, այլ նաեւ՝ հին հայկական գուսաներգութեան եւ աշուղական երգերուն: 19րդ դարու երկրորդ կիսուն հայ բեմադրիչները եւ թատերագիրները ոչ միայն թարգմանեցին եւրոպական գործեր, այլ նաեւ ստեղծագործեցին հայկական երաժշտական գործեր, որոնց զարգացումը դարձաւ սկիզբը հայկական օփերային: Այս հոլովոյթին ռահ վիրան էր Տիգրան Զուխանեան, որուն առաջին գործով՝ «Արշակ Բ.» օփերայով (1862) սկիզբ առաւ հայկական օփերայի տարբերութիւնը: Ապա դոկտ. Ն. Մալմանեան մանրամասնութեամբ ներկայացուց յաջորդող տասնամեակներուն ստեղծագործած հայ երաժիշտներու եւ յօրինողներու (Տիգրան Զուխանեան, Քրիստափոր Կարա Մուրզա, Կոմիտաս, Մակար Եկմալեան, Արմէն Տիգրանեան, Ալեքսանտր Սպենդիարեան, Արամ խաչատուրեան) կերպարներով անոնց երաժշտական առանձնախտկութիւններուն վրայ:

Դասախօսութեան ընթացքին դոկտ. Ն. Մալմանեան շեշտեց, որ հայկական օփերայի ռահ վիրայի հայ երաժիշտները որդեգրեցին ինքնուրոյն ոճ, որուն ակունքները կու գան ժողովրդային մշակութային գանձանի արտայայտութիւններէ:

Դասախօսութեան ընթացքին ներկաները առիթ ունեցան գիտելու Տ. Զուխանեանի «Արշակ Բ.» եւ Լէպլէպիճի հօր հօր Աղան», Արմէն Տիգրանեանի «Անուշ» օփերայներու բեմադրութեանն տեսարաններ, ինչպէս նաեւ Ալեքսանտր Սպենդիարեանի «Այմաստ» օփերային երաժշտական բաժին մը:

السفير المستقبل البيرق

Տեղական մամուլը իր 20 Փետրուարի թիւով լուսարձակի տակ առած է հիւսիսի մէջ սուրիական ուժերու վերադարձը արդարեւորման գործընթացը, Լիբանանի և Քուէյթի միջեւ դիւանագիտական տազնաւար եւ լիբանանահայ սահմանին մօտերը իրադրութեան հրասայլերու հաստատումը: Միջազգային իրադրամութիւններուն շարքին տիրական ներկայութիւնն են իրաքեան եւ պաղեստինեան տազնաւարները ու իսրայէլեան բռնարարները: Ասոնց կողքին թերթերը իրենց երկուսն թիւով անդրադարձած են Հայաստանի նախագահական ընտրութիւններուն եւ գրած են, թէ նախագահ Ռոպիթ Քուէյթեան մեծ հաւանականութիւն ունի վերընտրուելու: Օրաթերթերը նաեւ գրած են Հարաւային Քուէյթի մէջ մեթոքի հրդեհին պատճառով զոհերուն եւ իրանեան պինդորդական ռազմական օգնութիւններուն մասին:

«Սահար» թերթը գրած է, թէ Սուրիայի վերադարձը արդարեւորման գործընթացին մէջ յայտարարութեան մասին եղած յայտարարութեանն էն քանի մը ժամ ետք: «Լիւուս» գրած է, թէ Քուէյթի դեսպանը վերադարձաւ Պէյրութ եւ քանակէն լուծումի ճամբուն վրայ է: Ըստ թերթին, Ապտալա իշխանը եւ վարչապետ Հարիրի կը քննարկեն Իրաքի տազնաւար: Սուրիական ուժերու վերադարձը սկսաւ Հարաւային Քուէյթի մէջ մեթոքի հրդեհին պատճառով զոհերուն եւ իրանեան պինդորդական ռազմական օգնութիւններուն մասին: «Սահար» գրած է, թէ սուրիական ուժերու վերադարձը արդարեւորումը կ'ամբողջանայ քանի մը օրէն. վարչապետ Հարիրի կը ժխտէ Քուէյթի հետ որեւէ հարկի գոյութիւնը եւ կ'ըսէ, թէ եթէ սիւալ մը պատահած է, երբեք դիտումնաւոր չէր:

«Տիւրք» նշած է, թէ Քուէյթի հետ դիւանագիտական տազնաւար հարթուեցաւ. ըստ թերթին, քրիստոնէայը ընդդիմադիրները կ'ողջունեն սուրիական ուժերու վերադարձը եւ բջիջալիսի ու ելեկտրականութեան թղթարարները գրուած են նախարարաց խորհուրդի սեղանին վրայ:

«Սահար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ արաբական արտակարգ վեհաժողովին կայացուցած ընտրութեան արդարեւորման գործընթացը կը շարունակուի մինչեւ 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

«Սահար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ արաբական արտակարգ վեհաժողովին կայացուցած ընտրութեան արդարեւորման գործընթացը կը շարունակուի մինչեւ 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

«Սահար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ արաբական արտակարգ վեհաժողովին կայացուցած ընտրութեան արդարեւորման գործընթացը կը շարունակուի մինչեւ 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

«Սահար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ արաբական արտակարգ վեհաժողովին կայացուցած ընտրութեան արդարեւորման գործընթացը կը շարունակուի մինչեւ 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

«Սահար» նաեւ լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ արաբական արտակարգ վեհաժողովին կայացուցած ընտրութեան արդարեւորման գործընթացը կը շարունակուի մինչեւ 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեղեկացնում ենք, որ Լիբանանի Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնում կազմաւորւած ընտրական տեղամասում 2003 թ. Փետրուարի 19ին Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցել է Լիբանանում բնակուող եւ ծանակաւոր գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան 103 քաղաքացի:

Ընտրողներին 78ր իրենց քուէն տուել են Ռոպիթ Քուէյթեանին, 10՝ Արտաշէս Գեղամեանին, 10՝ Ստեփան Գեմիթեանին, 2՝ Վաչագէ Մանուկեանին, 1՝ Արամ Կարապետեանին: Երկու քուէաթերթիկ ճանաչել է անվաւեր:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՍՊՊԵՆՏԻՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՄ)

ՏԵՍԱԵՐԻԶԻ ՅՈՒՅՎԴՐՈՒԹԻՒՆ «PATCH ADAMS»

(Դերասան՝ Ռոպին Ուիլիսոն, իրական կեանքի քաղաքացիական ծառայող մը, ուր կը խօսուի մարդկային արժեքներու եւ յատկապէս բժշկական բարոյագիտութեան առնչուող այժմեական հարցերու մասին):

Տեղի կ'ունենայ Զաքար, 22 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 6:00ին, միութեան կեդրոնի մէջ, մայրավանք, Աճախ: Հրապարակած են բոլոր հայ համալսարանական երիտասարդները:

ԾԱՆՕԹ. Տեսանկյանի ցուցադրութենէ ետք, տեղի պիտի ունենայ գրոյց - քննարկում եւ հիւրասիրութիւն:

NOAH'S ARK ART GALLERY

Կը ներկայացնէ ԳԵՂԱԿԱՐԻԶ ՅՈՎՍԷՓ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ

Հովանաւորութեամբ ՊՐ. ԳԻՈՐԳ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ

Յուցահանդէսին հասոյթը պիտի տրամադրուի «ԱԶԳԱԿ»-ի ֆոնտին

ԿԱԼԵՐԻՆ ՍԻՐԱՅՈԺԱՐ ՏՐԱՍՄԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԿԱՐԻԶԻՆ

Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ Երկուշաբթի, 24 Փետրուար 2003, ամէն օր, առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00ը:

ՀՐԱԻԲ



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Կրակաբուս խաւփախանութիւններ

ԷՔՈՒԱՏՈՐԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԳԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՎԻՊԵՐԳԱԿԱՆ ՉԷ

ԱՃԽԱՐԿԻՆ ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐԴԵՐ ԸԱՅԹԱՅԹՈՂ ՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԳՈՐԾԱԾՈՒՄԾ ՔԻՄԻԱԿԱՆ ՆԻԻԹԵՐԸ ԿԸ ՄԱՇԵՅՆԵՆ ԱՃԽԱՍԱԴՈՐՆԵՐՈՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ: «ՏԸ ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅԱՋ» ԿԸ ԳՐԷ:

էքուատորի մարդկային սրտին չափ մեծ վարդերը 5 տարուան մէջ դարձած են Միացեալ Նահանգներու խորհրդանշական նոր ծաղիկը, շնորհիւ այն հրաբխային հողին, կատարեալ ջերմաստիճանին եւ արեւու առատ լոյսին, որ տարեկան 240 միլիոն տոլարի շահ կ'ապահովէ եւ գործի տասնեակ հազարաւոր կարելիութիւններ կ'ընձեռէ հիւսիսային էքուատորի երբեմնի թշուառ Քուլթիօ շրջանին մէջ:

Վալընթայնի օրուան աւելիով հազարաւոր ամերիկացի ծաղկավաճառներ ծանուցեցին այս բերրի հովտին վարդերը: Օրինակ, «Քալիքս Գորոլլա» ընկերութիւնը կը յայտարարէ, թէ ասիկա այն վայրն է, ուր «Անտեան մշուշը եւ միջօրէականի արեւը միասին դաւադրութիւն մը կը սարքեն, արտադրելու համար վարդեր, որոնք փառահեղորէն կը ծաղկին անմիջապէս, ապա իրենց փառքը կը պահպանեն երկար ժամանակ, մինչ նուազ որակաւոր վարդի տեսակներ կը սկսին թառամիլ»:

Սակայն վարդերը նաեւ փշոտ կ'ըլլան: Մինչ էքուատորի գունագեղ ծաղիկները վիպերգականօրէն կը ճառագայթեն աշխարհի տարածքին, մեծաքանակ վարդ ծախողներ կ'ամբաստանուին անարատ եւ միջատէզ զերծ ծաղիկներ անցնելու նպատակով միջատասպան, հականեխիչ եւ սնկային մարմիններու դէմ պայքարող թունաւոր նիւթեր գործածելու յանցանքով:

Ինչպէս այլ ճարտարարուեստներու պարագային, օրինակ՝ հագուստի եւ աղամանդի արտադրութիւն, աղքատ աշխատաւորներ նախ կը մտածեն ուտելու մասին, եւ վերջը՝ աշխատանքի պայմաններուն: Անոնք աշխարհի հարուստներուն համար կը տքնին վարդի պարտէզներու մէջ, հակառակ գլխացաւի եւ մորթային բորբոքումներու, իսկ հարուստները իրենց հերթին շատ քիչ բան գիտեն այն պայմաններուն վերաբերեալ, որոնք գոհացում կու տան իրենց փափաքներուն: Բժիշկներ եւ գիտնականներ, որոնք աշխատած են շրջանին մէջ, կ'ըսեն, թէ առողջական լուրջ հարցեր արձանագրուած են վարդի ճարտարարուեստին մէջ տքնող աւելի քան 50 հազար աշխատաւորներուն մօտ, որոնց աւելի քան 70 առ հարիւրը կ'ինքնընդունեն:

Ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ չեն կրնար պէտք եղած ձեւով աշխատիլ՝ ծաղկամշակութեան կեդրոններու հասողութեան դժուարութիւններու պատճառով: Այս ճարտարարուեստին ներկայացուցիչները արգելք կը հանդիսանան անոնց աշխատանքներուն: Սակայն Աշխատաւորներու Միջազգային կազմակերպու-

թեան կողմէ 1999ին հրատարակուած ուսումնասիրութիւններ եւ անցեալ տարի էքուատորի կաթոլիկ համալսարանին կողմէ հրատարակուած վիճակագրութիւններ ցոյց կու տան, թէ ծաղկամշակութեան ճարտարարուեստին մէջ աշխատող կիներ շատ աւելի յաճախ վիժուածներ կ'ունենան շրջանին մէջ, եւ թէ՛ տղամարդ թէ՛ կին աշխատաւորներուն աւելի քան 60 առ հարիւրը կը տառապի գլխացաւէ, սիրտխառնուքէ, աղօտ տեսողութենէ եւ յօգնութենէ:

Քսան տարի առաջ ծաղկամշակութեան առաջին կեդրոններուն հաստատումէն ետք էքուատոր դարձած է աշխարհին վարդ հայթայիտող չորրորդ մեծագոյն երկիրը եւ յաճախորդներ ունի Ղազախստանէն մինչեւ Քանաաս: Անցեալ շաբաթ Ռոզա Փրիմա պարտէզին աշխատաւորները խելայել Մեփով աշխատեցան կտրելու, փաթեթելու եւ ծրարելու համար օրական 70 հազար ցողուն: Համակարգիչներ կ'օգնեն, որ վերակացուներ հետեւին իւրաքանչիւր ցողունի վիճակին եւ իւրաքանչիւր աշխատաւորի արտադրողականութեան:

Ռոզա Փրիմայի ընդհանուր պատասխանատուն՝ Ռոս Ծոնսըն հպարտ է իր գործով եւ մանաւանդ՝ իր աշխատաւորներով: Ան կ'ըսէ, թէ շաբաթ քանի մը անգամ բժիշկ մը կ'այցելէ իր պարտէզները, եւ թէ՛ բոլոր աշխատաւորները ձեռնոցներ ու պաշտպանող կազմածներ կը գործածեն քիմիական նիւթերու հետ չգիտած ունեցան թէ ոչ:

Ծոնսըն կ'ըսէ, թէ հետապնդած եւ ճգնած է այն միջնորդները, որոնք մանուկներ գործի լծած են իրրեւ ժամանակաւոր աշխատաւորներ:

«Տարիներու ընթացքին մեծ բարելաւում արձանագրած ենք, - կ'ըսէ Ծոնսըն, որ ծնած է էքուատոր եւ 7 տարի առաջ օգնած է Ռոզա Փրիմա պարտէզին հաստատումին: - Կը կարծեմ, որ ասիկա ազնուական ճարտարարուեստ մըն է եւ ազնուական ազդեցութիւն կը գործէ մարդու վրայ, այստեղ, թէ այլուր»:

Ծոնսըն համաձայն, վարդերը կտրուելէ 24 ժամ առաջ կը հականեխուին: Ապա անոնք մէկ օր թաթխուած կը մնան քիմիական բաղադրութեան մը մէջ եւ գրեթէ սառած կը փո-

խաղրուին այլ երկիրներ:

էքուատորի կաթոլիկ համալսարանէն ծինագէտ մը՝ Սիզըր Փագի-Մինօ կ'ըսէ, թէ իր ուսումնասիրած պարտէզներուն մէջ միջատասպան բազմաթիւ դեղերու գործածութիւնը 1990ական տարիներուն սահմանափակուած էր այլ երկիրներու տարածքին, ներառեալ՝ Միացեալ Նահանգներու, որովհետեւ անոնք վտանգ կը սպառնային առողջութեան եւ խիստ թունաւոր որակուած էին Աշխարհի Առողջապահութեան կազմակերպութեան կողմէ: Ամէնէն տիրահոշակ միջատասպան դեղերուն շարքին են՝ քալիքսոն, ալտիքսոն եւ ֆեմալիֆոսը:

Փագի-Մինօ կը մերժէ յիշատակել իր ուսումնասիրած պարտէզներուն անունները, որովհետեւ համաձայնութիւն մը ունէր անոնց սեփականատէրերուն հետ: Ան կ'ըսէ, թէ աշխատաւորներ ծաղիկները կը հականեխին տնօրոպական հազուստով, առանց պաշտպանող կազմածներու, միջատասպան դեղերը դրուած էին լաւ չզոցուած տուփերու մէջ եւ հականեխիչ նիւթերը կը տարածուէին աշխատաւորներուն ճաշարաններուն մէջը:

Երբ հարց կու տանք, թէ պետական ինչ մարմիններ կը հսկեն աշխատաւորներուն առողջութեան եւ ապահովութեան, Փագի-Մինօ կ'ըսէ. «Նման քննութիւններ չեն կատարուիր»: Ոչ աշխատանքի նախարարութիւնը եւ ոչ այլ առողջապահութեան նախարարութիւնը նման բաժանմունքներ ունին:

Աշխատանքի նախարար Ֆելիքի Մանթիլա կ'ըսէ, թէ կը ծրարէ քանի մը շաբաթէն այցելել ծաղիկի եւ պանսի պարտէզները: Մանթիլայի համաձայն, պետութիւնը կը ծրարէ «կտր սեղաններ» կազմակերպել աշխատաւորներու եւ պարտէզներու վերակացուներու համար, աշխատանքին պայմանները եւ ընկերութիւններուն որդեգրած միջոցառումներուն տարողութիւնը քննելու համար:

«Եթէ խախտումներ կան - կ'ըսէ ան,- ապա կտրուկ միջոցառումներու պիտի դիմենք: Ծրարելը մը կը պատրաստենք աշխատաւորներուն պայմաններուն վերաբերեալ եւ դիմած ենք միջազգային կազմակերպութիւններու օգնութեան»:

«Մեր ճանչցած ծաղկամշակութեան ընկերութիւնները շատ գիտակից են կենսոլորտային հարցերու նկատմամբ - կ'ըսէ Շիքակոյի մէջ մեծաքանակ ծաղիկներ վաճառող մը՝ Հերիսըն Քեննիքոթ, որ «Քեննիքոթ Պրատըրը» ընկերութեան գործադիր տնօրէնն է եւ՝ Ամերիկայի Ծաղկավաճառներու Միութեան նախկին նախագահը: - Անոնք երկար ճամայր կը կտրեն կենսոլորտային պայմանները լրացնելու եւ ընդունուելու համար: Անոնք կը հոգան մարդոց, բնակարան եւ բժշկական խնամք կ'ապահովեն»: Այսուհանդերձ դժուար է ջնջել պատկերը 32 տարեկան եւ 34 տարեկան երկու աշխատաւորներու, Սոլատի եւ Փեթրոնայի, որոնք երկուքն ալ մայրեր են, դեղնախտէ կը տառապին ու ոսկրացած են: Գործէն ետք հարցազոյցներ կատարեցինք անոնց հետ, եւ անոնք խնդրեցին ամբողջութեամբ չըացայայտել իրենց անունները, վախճարով, որ կը կորսնցնեն իրենց 156 տոլարի ամսավճարը, զոր կը ստանան ջերմոցներու մէջ ծաղիկներ կտրելու համար:

Այս կիները տարրական ուսում ունին, սակայն աւելի բարձր ուսումի կարիք ունին գիտնալու համար, թէ ինչու գիշերները իրենց երկիւղները կը բարախեն եւ ցերեկները՝ իրենց գլուխները:

«Հականեխումի օրէնքները չեն յարգուիր, - կ'ըսէ Փեթրոնա, որ 4 տարի աշխատած է ծաղիկի պարտէզներու մէջը: - Քիմիական նիւթեր կը սրսկեն տոյնիսկ այն ատեն, երբ կ'աշխատինք: Մազերս սկսած են թափիլ: Երիտասարդ եմ, բայց շատ ծեր կը զգամ»:

Սոլատի, որ ծաղիկի պարտէզներու մէջ աշխատած է 12 տարի, դանդաղօրէն գլուխը կը գարձնէ մէկ կողմէն միւսը: «Եթէ գլուխս աւելի արագ դարձնեմ, սիրտխառնուք կը զգամ, - կ'ըսէ ան, ապա ցոյց կու տայ ոսկրացած թեւերը: - Ախրժակ չունիմ»:

Երբ հարց տրուեցաւ, թէ արդեօք իրենց աշխատած պարտէզին մէջ բժիշկ կ'ա, կիները իրենց աչքերը պտտեցին:

«Միշտ մեզի կ'ըսէ, թէ հիւանդ չենք եւ գործի կը դրկէ, - կ'ըսէ Փեթրոնա: - Կ'աշխատի ընկերութեան համար, եւ չ'օգնէր մեզի»:

քանապակեան եղջերուի թիւերուն: Կուղբերը, որոնք մինչեւ դար մը առաջ անհետանալու վտանգը կը դիմագրաւէին, Քանատայի մէջ այժմ կը հաշուեն շուրջ 20 միլիոն եւ պատճառ կը դառնան արօտավայրերու ողողումին, որովհետեւ ամէն տեղ հողաթնամբեր կը բարձրացնեն:

«Տակաւին դառնացած եմ մեզի պատահածէն, - կ'ըսէ Նորթուէսթ Թերիթորգի գլխաւոր ներկայացուցիչը՝ Սթիֆըն Քաքֆուլա: - Դիմեցինք «Կրիմփիս»-ի եւ այլոց, անոնց լսինք, թէ պիտի ստիպուինք քարիւղ եւ կազ արտադրել եւ հանքագործութեամբ զբաղիլ, որպէսզի գործ մը ունենանք, եթէ Եւրոպայի մէջ նման կարծի կեցուածք պիտի որդեգրէին վայրի անասուններու մորթին ներածումին դէմ»:

Իրենք բնիկ քանապակեան իր խմբաձուլումին երիտասարդ ղեկավարը՝ Քաքֆուլա դէմ է Մաքքենգի գետին վրայ կազատար խողովակ մը շինելու գաղափարին: Սուշուանա առեւտրաւոր յաջալուծէն ետք բնիկ քանապակեան խումբը ներտարնք չունէին, բացի բանակցել եւ պատուեզին պահանջելէ քարիւղի ընկերութիւններէն, մուշտակի շուկային մէջ իրենց արձանագրած կորուստներուն իրրեւ հաստուցում: Այժմ կենսոլորտի պաշտպաններ այն մտավայրութիւնը ունին, թէ գետին հովտին մէջ բնական կազի արտադրութեան ծրագիրները կրնան վտանգել գործ մշկեցներու (մասք օքս) եւ քանապակեան եղջերուներու բնակավայրը:

Նոյնպէս՝ հիւսիսային Քեպլէթի թշուառութեան մատնուած ինուիները անցեալ տարի համաձայնութիւն մը գոյացուցին Քանատայի պետութեան հետ՝ կազ փնտռելու համար ծովուն բացերը, որոնք կը վխտան փոկերով: Վերջերս ձէյմսի ծոցին մէջ բնիկ քրիերու 9 հաւաքականութիւններ թեր քուէարկեցին, որպէսզի գաւառային կառավարութիւնը 300 քառ. քմ. տարածութեամբ որսորդական աւանդական տարածքներ օգտագործէ ջրելելկարակայանի մը շինութեան համար: Անոնք փոխարէնը ստացան միլիոնաւոր տոլար արժողութեամբ օգնութիւն եւ աւելի լայն ինքնավարութիւն:

Այս համաձայնութեան ամէնէն զօրաւոր ջատագովները որսորդներն էին, որոնք այլ լեւս չեն կրնար թակարդներ լարել շրջանին աղուէսներն ու կուղբերը որսալու համար: «Անասուններ մի՛ սպաննէք ըսին, - կ'ըսէ Քեպլէթի քրի հաւաքականութեան Գերագոյն ինօրհուրդին գործադիր տնօրէնը՝ Պիլ Նամակուզ,- եւ մեռցուցին անտեսութիւնը»:

Պատրաստեց
L. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՔԱՆԱՏԱՅԻ ԲՆԻԿ ԻՆՈՒԻՆԵՐՈՒՆ ԿԵԱՆՔԻ ԶԵԻԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ

ՍՈՒՇԱԿԻ ՎԱՃԱՌՔԻՆ ԴԵՍ ԱՆԱՌՈՒՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ ԽՄԲԱԴՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՃԱՌ ՊԱՏՃԱՌ ԿԸ ԴԱՌԱՅ, ՈՐ ԸՆԻՄԻՍԱՅԻՆ ԲԵԲԵՈՒ ԲՆԻԿՆԵՐԸ ԸՄԱԾԱՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՄԱՆՊԱԿԱՆ ՈՐՈՐԴՈՒԹԵՆԵՆ ԵՒ ԳՈՅԱՏԵԼՈՒ ԸՍՏՈՐ ԻՐԵՆՑ ՏԱՐԱՅԵՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵՆ ԶԱՐԻԴԻ ՈՒ ԸՆԵԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ: «ՏԸ ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅԱՋ» ԿԸ ՄԱՆՐԱՍԱՆԵ:

Հիւսիսային բեւեռի մէջ Քանատայի բնիկները փափկանկատ են եւ զգուշաւոր, երբ իրենց կարծիքները կը յայտնեն դրսեցիներուն: Այսինքն, մինչեւ որ խօսակցութեան նիւթը հասնի մուշտակի դէմ պայքարին, որ ծայր տուաւ 1960ական տարիներու վերջերուն:

Եւ զարմանալի չէ: Մուշտակի դէմ պայքարին ոչ դիտումնաւոր անդադարձները վնաս հասցուցած են հազարաւոր բնիկ քանատացիներու եւ մղած են, որ անոնք եկամտաւոր իրենց կորսուած աղբիւրները փոխարինեն իրենց ցարդ չպեղուած շրջաններուն մէջ հիւրընկալելով քարիւղի, կազի եւ հանքագործութեան ճարտարարուեստները, զորս կը մերժէին ժամանակին:

«Հակադարձելու բառեր չեմ գտներ, - կ'ըսէ Ջաքարիաս Քունուք, ինուի բեմադրիչ մը եւ փոկերու որսորդ մը, որ կը բնակի հիւսիսային բեւեռի Իկուլիք գիւղականին մէջ: - Անոնք պարզապէս Հոլիվուտէն հարուստներ

են, որոնք կը խօսին այնպէս, կարծէք անասունները մարդ արարածի պէս կը մտածեն, մինչդեռ իրականութիւնը այդպէս չէ»:

Այլ ինուի մը, որ կը ծառայէ Ինուիքի քուլտիւրի մէջ, աւելի ազնիւ զգացումներ չունի:

«Հասակ նետած եմ գերաններով շինուած խոցի մը մէջ, հողէ երդիքով ծածկուած: Կը ճամբորդէիք շուններու խումբերով, ուռկաններս կը ստուգէի, որսի կ'երթայի եւ անասուններ թակարդը կը ձգէի, - կը պատմէ 43 տարեկան վերակացուն: - Պիտի ուզէի վերադառնալ կեանքի նախկին ձեւին, սակայն Եւրոպայի արեւնող սրտերը եւ իրենք զիրենք առաքելի ձեւացնող խմբաւորումներ վերջ դրին մեր կեանքի ձեւին»:

Այժմ ան կը սորվի ծանր փոխադրակաւքեր քշել բնական կազի խողովակի մը շինութեան ծրագիրը մը համար, որ պիտի իրագործուի Մաքքենգի գետին խողով հողիտին մէջ:

Նման կարծիքներ, որոնք կ'արտայայտուին վերջին շաբաթներուն, կէտերու մարմնին մէջ խողի նետերու նման կը խոցեն կենսոլորտի պաշտպանները, որոնք այժմ կ'ընդունին, թէ ոմանք շատ առաջ գացած են փոկի ձագերը պաշտպանելով լախտի հարուածներէ, եւ լուսանը (լայնքս), սամոյրը (մարթէն), կուղբը (պիվըր), աղուէն ու մուշտակաւոր այլ անասուններ՝ վայրենի թակարդներէ, որոնց մէջ բռնուած անասունը կ'ոռնայ ցաւէն:

Առեւտրական նպատակներու համար փոկեր սպաններու եւ որսորդներու կողմէ անասուններու անմարդկային վերաբերումին դէմ պայքարը ոմանց համար բարոյական պարտականութիւն կը թուէր ըլլալ: Այժմ կը թուի, թէ այս պայքարը անտեղի կերպով բնիկ հաւաքակառուցիւնները ենթարկած է պատկերի, որ աւելի ճիշդ պիտի ըլլար, եթէ սահմանուէր առեւտրական աւելի մեծ շահերու դէմ:

«Մուշտակի առեւտրութիւն քայքայումը աղէտ մըն էր անոնց համար, որոնք կը հսկեն միջավայրի պաշտպանութեան», կ'ըսէ Ալիքա Քլայպ Քանա-

տա»ի գործադիր տնօրէնը, որ այժմ կ'առաջարկէ Քանատայի բնիկներուն որսացած անասուններուն մուշտակը զատորոշել եւ գաննք ընդունելի դարձնել կենսոլորտի ու միջավայրի պաշտպանութեան նախանձախնդիր յաճախորդներու:

Մուշտակի դէմ երկարամեայ արգելքը բազմաթիւ վերիվայրումներ ունեցած է: Հանրային դժգոհութիւնը պատճառ դարձած էր, որ 1983ին Եւրոպայի Տնտեսական Համայնքը արգիլէր փոկի կաշիին ներածումը: Ութ տարի ետք, 1991ին Եւրոպական Միութիւնը հրատարակեց օրէնք մը, որ կ'արգիլէր մուշտակ ներածել այն երկիրներէն, ուր մարդիկ անասուններ կ'որսային անոնց ոտքերը թակարդի մէջ ձգելով:

Եւրոպական Միութեան օրէնքին կիրարկումը ուշացած տարիներ՝ քանապակեան, ուսական եւ ամերիկեան լոպիիցիկի պատճառով: Սակայն փոկի կաշիին եւ այլ անասուններու մորթին գործածութեան դէմ տասնամեակներ տեսած պայքարը, զոր կը գլխաւորէին Անասուններու Բարօրութեան Միջազգային Հիմնադրամը եւ այլ խմբաւորումներ, օգնեցին փոխելու նորաձեւութեան ճաշակները: Այն կիները, որոնք անասունի մորթ կը հագնին իրրեւ վերարկու եւ քազակ, տակաւին իրենց վրայ կը հրաւիրեն կենսոլորտի պաշտպաններու խէթ նայուածքը, որոնք հաւանաբար պիտի զարմանան լսելով, թէ իրենց պաշտպանած ազնուական դատին համար զին մը կը վճարուի:

Որսորդներ, որոնք ժամանակին կենսոլորտի պաշտպաններու տեղեկագիրներ կ'ուղարկէին, երբ փայտ կտորը ընկերութիւններ ամբողջ անտառներ կը փճացնէին, կամ՝ Քանատայի զինուորական մարմիններուն գանգատ կը ներկայացնէին, երբ անոնց օդանաւերը ցածէն կը թռնէին՝ խանդարեալ քանատակեան եղջերուներու (քարիպու) անդորրութիւնը, այժմ այլեւս հսկողութեան այս դերը կատարելու ի վիճակի չեն:

Գայլերը, զորս ժամանակին բնիկները կ'որսային, պաշտպանելու համար իրենց թակարդներուն մէջ ինկած մուշտակաւոր անասունները, այժմ բազմացած են, ի վնաս գոմէշի եւ

ՓԵՏՐՈՒՄԵԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՎ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵՎԱՆ

Կազմակերպութեամբ՝ ԱՂԲԱԵԱՆ ԱՎՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Մասնակցութեամբ՝ ԷԼԻ ՊԵՐՊԵՆԵԱՆԻ ԸՆԿԵՐԱԿՈՒՅՐԵԱՄԸ՝ ՍԵՂՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ Անակնկալ՝ Մասնակցութիւն հիր Երգիչի

Տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 21 Փետրուար 2003ին, Երեկոյեան ժամը 9:00ին «Շ.Ս.Ը.Ս. - Աղբալեան» մարզամշակութային համալիրին մէջ:

Տեղերը ապահովելու համար հեռաձայնել 04 - 722902 - 3 թիւերուն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՖՇԻԼ իրարօգնութեան սնտուկը սոյն հաղորդագրութեամբ կու գայ փոխանցելու, թէ 2002-2003 կրթական տարեշրջանին համար իր հասոյթէն ստեղծուած կրթական ֆոնտին դիմում կատարած էին 162 համալսարանականներ եւ 426 աշակերտներ:

ԱՖՇԻԼ նաեւ «Չուարթնոց» կեդրոնին նուիրեց երեք համակարգիչներ: Այս ձեւով ԱՖՇԻԼ իրարօգնութեան սնտուկը լաւագոյն փաստը կու տայ լիբանանահայութեան հաւաքական ուժով իրականացած ծրագիրի մը յաջողութեան:

ԱՖՇԻԼ շնորհակալութիւն կը յայտնէ իր 2500 անդամներուն, որոնք անդամագրութեամբ կարելի եղաւ իրագործել վերոյիշեալ ծրագիրը:

ԱՖՇԻԼ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՒՍԵՐԺ ՕԶԱՆԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003, Հայ Կաթողիկէ Ս. Եղիա եկեղեցւոյ մէջ, Տրպայաս, առաւօտեան ժամը 11:00ից:

ՍԱՌԱ ԱՐԹԻՆԵԱՆԻ մահուան քառասունցի մարտի տարեկան հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003, Հայ Կաթողիկէ Ս. Թովմազոս Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԵԼԻՔ ԶԷԶԷՊԱՇԵԱՆԻ մահուան քառասունցի մարտի տարեկան հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԵՂԱ ՃԸՐՃԸՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003, Նոր Մարաշի Սրբոց Զառանգից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱԿՈՒ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Փետրուար 2003, Նոր Մարաշի Սրբոց Զառանգից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՆ ԹԻՒ 5374 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for the crossword puzzle. The grid is mostly empty, with some numbers indicating starting points for words.

- Վերջնական լուծումներ: 1. Մուրճակ: 2. Տափակ զղմած - Այբուբենէն - Մանգաղի կոթ: 3. Ածականակերտ մասնիկ - Հայաստանի լեռներէն: 4. Կրկնորդ - Ստացական ածական: 5. Ջանալ, աշխատիլ - Պարանոց: 6. Շողկապ: 7. Դարձեալ - Դրան վարագոյր: 8. Ունկնդրելի - Սրիկոն: 9. Կրակ - Մանելիք - Ածականակերտ մասնիկ: 10. Իմացականութիւն - Ո՛չ հուժ, ո՛չ եկած:

ԹիՒ 5373 ԽԱՉԲԱՆԻ ԼՈՒԹՈՒՄԸ

Table with 10 columns and 10 rows for the second crossword puzzle. The grid contains some letters and numbers.

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of flour, oil, and other goods.

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of rice, lentils, and other grains.

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of oil and other products.

ՏԻՆՆԵՆ ԿՐԱԵՆ ԱՍՏՂԵՐԸ

Յաջողեցաք այս օրերուն պահպանել տնտեսական ձեռք բերած արդիւնքները, բայց տակաւին այնքան ալ հաստատուն չէ ձեր վիճակը: Ուրեմն այս մարզին մէջ խնայասիրութեան ձեռք բերելու միջոցները:
*ՅՈՒԼ (21 Մարտին 20 Ապրիլ)
Յաջողեցաք այս օրերուն պահպանել տնտեսական ձեռք բերած արդիւնքները, բայց տակաւին այնքան ալ հաստատուն չէ ձեր վիճակը: Ուրեմն այս մարզին մէջ խնայասիրութեան ձեռք բերելու միջոցները:
*ՅՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)
Կարեւոր գործընթացի մը կամ բանավեճի մը ընթացքին չէք կրցած ըսել ձեր վերջին խօսքը: Հիմա կը զգաք, թէ ձեր խօսքը մը ընդունուած է ձեր տնտեսական գործընթացին մէջ:
*ԵՐԿՈՒՆԻՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Եթէ աշխատանքի նոր առաջարկ մը ներկայացնեն ձեզի, մի մերժեք, որովհետեւ շատ նպաստաւոր արդիւնքներ կ'ապրուի ձեզի: Ուրեմն առաջ անցեք:
*ԿՆԵՑԻՆԻ (22 Յունիսին 23 Յուլիս)
Դուք ձեզի մի պարտադրեք փայլելու տրամադրութիւն, թոյլ տուէք, որ հարցերը հասունանան ինքնաբերաբար. այն ատեն պիտի տեսնէք, թէ յաջողած էք եւ ինքնավստահ: Փառքի՛ն ետեւէն մի վազեք. թող ինք հետապնդէ:
*ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)
Լաւատեսութեան պակասը ունիք, ամէն ինչ կը սեղմեք: Ձեր այս յոռետեսութիւնը նեղութիւն կու տայ ձեր շրջանակին: Ուրեմն թիչ մը յոյս ունեցեք:
*ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Նոր բարեկամութիւն պիտի հաստատեք նոր ծանօթներու կամ նոր զբոսանքներու հետ: Բայց այս նոր ծանօթութիւնը թող սանձադակ չըլլայ եւ զիտեք սահման մը դնել ձեր կապին:
*ԿՇԻՌԻԲ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Դրամական վնաս մը կրնաք ունենալ, որուն մասին բնաւ չէք մտածած: Այսուհանդերձ պիտի կարենաք նոր մը գտնել սխալը թեթեւցելու համար: Բարեկամներ պիտի օգնեն ձեզի:
*ԿՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Երեկոյթի մը ընթացքին պիտի հմայեք ձեր շուրջիները եւ բոլորին նայուածքները ձեր վրայ պիտի հրաւիրեք առանց ձեր կողմէ հիշ մը ընելու: Այս է, որ կը կոչուի մագնիսականութիւնը:
*ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Այսօր ձեր անձնական ճիգով պիտի կարենաք նոր շահեր պահանջել՝ շնորհիւ ձեր խնայողութեան եւ իմացական գործընթացին: Ասիկա թոյլ պիտի տայ օգնելու ձեզի, որ ձեր ամսուան ծախսերը կարենաք ծայրը ծայրին բերել:
*ԱՅԾԵՆԶԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Այս իրիկուն շատ հանելի հանդիպում մը պիտի ունենաք բարեկամներու հետ, որոնք ձեր դիմաց պիտի բանաւ աշխարհ մը, գոր չէք ճանչցած ցարդ: Պիտի ուզեք կրկնել այս հանդիպումը:
*ՅՈՎԱՆՆԻՅԸ (21 Յունուարին 19 Փետրուար)
Եթէ աշխատանքի մարզին մէջ պահանջներ ունիք, այսօր մասնաւորաբար եղեք խոհեմ եւ զիջազգետ: Այսօր ձեր բարեկամները կրնան փայլուն չըլլալ:
*ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Եթէ որոշած էք ճամբորդել, օրը բարեկամներ է: Ըրեք ձեր փափաքը: Ձեր մեկնած վայրին մէջ պիտի հանդիպիք նոր սիրոյ մը:

ՕՐԱՏԵՏՐ ՓԱՌԱՏՈՒՆ / ՑՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

«ՄԼՈՒՔ ԷԼ ԹՎՈՒՄԵՅ» ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԾԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Երգահատն էւ պարային թատերական էլիտներ կազմակերպող լիբանանեան կարեւոր խումբերէն մէկը՝ Ռահպանիներու թատերախումբը այս տարի եւս հանրութեան կը ներկայանայ նոր գործով մը՝ «Մլուք էլ թաւաֆ», որ իր մէջ կը միախառնէ քաղաքականութիւնն ու վիպագրութիւնը: Գեղարվեստը ընթացքով իր արտադրութեան շարքի, երաժշտութեան ու պարային շարքի մտնելով ներկայացնող այս բեմականացումը կը պատմէ արաբական կորստած փառքերու պատմութիւններ, որոնց ընկերակցող երաժշտութիւնը երաժշտութիւնը երաժշտութիւնը հարստացած է լիբանանեան եւ արաբական գունազեղ տարազեղով եւ ուրոյն բեմադրարարութեամբ, որոնք բեմին վրայ կը ստեղծեն արեւելեան աշխարհի մը: «Մլուք էլ թաւաֆ»

«Ալ Պուսթան» փառաօն, էլոյթ կ'ունենան ժաբիին Ռոս (շուրակ) եւ Տէյվիտ Փոնֆորտ (քլավինո), ժամը 20:30ին, «Ալ Պուսթան» պանդոկին մէջ:
- Նուագահանդէս, էլոյթ կ'ունենան Լիբանանի Ազգային Սիմֆոնիք նուագախումբը, ժամը 20:30ին, «Ալ Պուսթան» եկեղեցւոյ սրահին մէջ:
- Նկարչական ցուցահանդէս «Լոս Բափիչիոս» սր կոյտ», «Սերվանթես» հիմնարկին մէջ, մինչեւ 22 Փետրուար:
- Նկարչական ցուցահանդէս՝ Յովսէփ Գասպարեանի գործերը, «Նոս» գ Արք» ցուցասրահին մէջ, մինչեւ 24 Փետրուար, ժամը 11:00էն 19:00:
- Պարային քառօրեայ Մասնուր Ռահպանիի «Մլուք էլ թաւաֆ», «Բազիս» տիւ Լիպանի մէջ, Զորքաբարիէն Շաքար օրերը, ժամը 20:30ին:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Table with 2 columns: Time and Program Name. Lists various TV and radio programs with their respective times.

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՄՁ

ՑԻՐ ՈՒ ՑԱՆ ՀԱՅԵՐ 6000 ՀԱՅԵՐ ՌԻԱԹՈՐԹԱՈՒՆԻ ՄԵՋ

Ուսըրբաուցի (Մ. Նահանգներ) հայ գաղութը կը հաշուէ 6000 հայ: Պոսթմոդերնիզմի մը մղող հետեւ է եւ ունի ամէնէն շատ գործարանները: Տեղական զպրոցներու մէջ աշխի կը գարնէ հայ ուսանողութեան թիւը: Բարձրագոյն զպրոցի շրջանաւարտներուն մէջ մեծագոյն թիւը հայերը ունին եւ ուշագրաւ են իրենց որակովն ալ: Նմանապէս հայ ուսանողները առաջին են մարդկան խաղերու մէջ: Ազգային տեսակետով գաղութը երկու մասի բաժնուած է՝ «յուրաքանչեւ» եւ «ազգային»: Առաջին նախընտրելի է ձեռք բերած հետեւորդներ, ունին նաեւ կանանց օժանդակ մասնակցող եւ երիտասարդական միութիւն: Գաղութը ունի մեկ եկեղեցի, յարակից զպրոցով, ուր կ'ունան հրեան մը տասնեակ փոքրիկներ: Եկեղեցին եւ զպրոցը կը գտնուին ուսկալարներու եւ իրենց կուսակիցներու ձեռքը: Կարմիրները ունին ակումբ մը, որ իրեն սրբարան կը գործածուի: Ասոնց կարգին կան մաս մը հնչակեաններ, որոնք տարին մէկ անգամ դաշտահանդէս կը սարքեն: Հ. Ց. Գաղակցութեան հետեւէ Հ. Օ. Միութիւնը, Հ. Երիտ. Գաղակցութիւնը, մշակութային միութիւններ, երգչախումբը եւ բարեկամները: Կարեւորութիւնը հաստատուած է հայ-ամերիկեան ակումբ մը, որ կը ծառայէ իբրեւ մշակութային կենտրոն: Հոն հաստատուած է զպրոցը եւ հոն տեղի կ'ունենան դաստիարակները: Այս բոլոր աշխատանքները ստանձնած է Հ. Ց. Գ. տեղական կոմիտէն: Հայ փոքրիկներու (արձուիկներ) եւ հայ զպրոցներու հոգը ստանձնած է Հ. Օ. Մ.: Գաղութը ունի վեց հայ բժշկ: Հինգ փաստաբան են բաւակալ փրկուստագետներ: Նիւթապէս բարեկեցիկ է: Կան առեւտրական հաստատութիւններ, գեղեցիկ բնակարաններ եւ ներկայաճարակ ակումբներ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ
ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԻԱՏԻ - Հ. Մ. Բ. Մ.՝ 49-61

Լիբանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանությունը դարձի վերջին հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Բ. Մ. Անթիլիաս իր կատարած վերջին մրցումին, 61-49 արդիւնքով պարտութեան մատնեց Ռիատի: Կիսախաղ՝ 28-18, ի նպաստ Հ. Մ. Բ. Մ. ի: Ծայրը ֆորի մրցումներուն, Հ. Մ. Բ. Մ. Անթիլիաս կը ճակատի Սաժէի դէմ (2րդ), իսկ Անդրանիկ (առաջին)՝ Եօ. Էն. Պէ. ի դէմ (4րդ):

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ, ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆԱՅԹԸՏ ԵՒ ՊԱՐՍԵԼՈՆԱ ԿՊՈՒՂՂՈՒԻՆ ԴԵՊԻ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆ

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»-ի ֆուտբոլի մրցաշարքին Բ. հանգրուանի երթի մրցումները արդէն իսկ կարած են իրենց կէս ճամբան, որովհետեւ 16 խումբերն այ կատարած են երեքական մրցում եւ տակաւին նոյնքան մրցումներ ունին կատարելիք:

Ծարդ միայն երեք խումբեր՝ Ա. ՍԷ. Միլան, Մանչեսթըր Եունայթըդ եւ Պարսելոնա, արձանագրած են երեքական յաղթանակ եւ ապահոված առաւելագոյն ինը կէտերը: Թէեւ Պարսելոնա ցարդ նշանակած է առաւելագոյն կոլերը (8), սակայն հետաքրքրական են Ա. ՍԷ. Միլանի արձանագրած յաղթանակները: Անիկա, ցարդ ոչ մէկ կոլ ստացած է իր բերդէն ներս եւ իր կատարած երեք մրցումներուն այ արձանագրած՝ 1-0 արդիւնքով յաղթանակներ:

Նշենք, թէ Պարսելոնա Ինթեր Միլանը 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք, յաջողեցաւ Ա. ՍԷ. Միլանի հաստատած մրցանիշը կտորել (1992-1993 եղանակին) եւ հաստատել նոր մրցանիշ մը՝ արձանագրելով յաջորդական իր 11րդ յաղթանակը:

Ստորեւ՝ դասաորումը երթի մրցումներուն

Ա. ԽՄՔԱԿ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.ԿԵՏ
1.- Պարսելոնա	3	0	0	8	2 9
2.- Ինթեր Միլան	2	0	1	7	6 6
3.- Նիւքեարլ	1	0	2	5	8 3
4.- Պ. Լեւերքուզըն	0	0	3	4	8 0

Բ. ԽՄՔԱԿ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.ԿԵՏ
1.- Արսենալ	1	2	0	4	2 5
2.- Ա. Ամսթերտամ	1	2	0	4	3 5
3.- Վալենսիա	1	2	0	2	1 5
4.- Ա. Էս. Ռոմա	0	0	3	2	6 0

Գ. ԽՄՔԱԿ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.ԿԵՏ
1.- Ա. ՍԷ. Միլան	3	0	0	3	0 9
2.- Ռեալ Մատրիտ	1	1	1	4	4 4
3.- Պ. Տորթուսնո	1	0	2	3	4 3
4.- Լոք. Մոսկուա	0	1	2	3	5 1

Դ. ԽՄՔԱԿ	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.ԿԵՏ
1.- Մ. Եռնալթըն	3	0	0	7	2 9
2.- Եռվենթըն	1	1	1	7	4 4
3.- Պալ	1	0	2	2	7 3
4.- Տեփ. Զորունա	0	1	2	2	5 1

Ստորեւ՝ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԵՐԵՎԱՆԻ, 25 ՓԵՏՐՈՒԲԱՐ (Գ. ԽՄՔԱԿ)
Պորտուգալ Տորթուսնո - Ռեալ Մատրիտ
Լոքոմոթիվ Մոսկուա - Ա. ՍԷ. Միլան

(Բ. ԽՄՔԱԿ)
Եռվենթըն - Մանչեսթըր Եունայթըդ
Տեփոթիս Քորունա - Պալ

ՉՈՐԵՔՈՒԹԻ, 26 ՓԵՏՐՈՒԲԱՐ (Ա. ԽՄՔԱԿ)
Ինթեր Միլան - Պարսելոնա
Նիւքեարլ - Պայեր Լեւերքուզըն

(Բ. ԽՄՔԱԿ)
Արսենալ Ամսթերտամ - Արսենալ
Վալենսիա - Ա. Էս. Ռոմա

ԿՈՒՉՈՒԻ
Տիկնոս մը ճաշ եփելու համար, շաբաթական երկու կամ երեք անգամ: Հեռաձայնը՝ 03-749946 քիլոմ:

ԿՈՒՉՈՒԻ
Փորձառու վաճառող օրիորդ մը կոշիկի եւ պայուսակի վաճառատան մը համար, Համբարայի շրջան: Դիմել հեռ. 01-350834 եւ 03-453495:

ԿԱՐՁՈՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ
●Սար Մխայիկ շրջան: Հեռ. 01 - 260887:

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ
Ճենքի պահակութեան համար: Հեռ. 03-876107:

ՓԻՆԿ ՓՈՆԿ. ԼԻՔԱՆԱՆԻ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԽՄՔԱՅԻՆ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Բ.Մ. ՊԵՅՐՈՒԹ - ՇԱՊԱՊ ԶՈՒՔ՝ 3-0

Լիբանանի փինկ փունկի կրտսերներու տղոց խմբային ախոյեանութեան Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի կ'ունենան Մոն Լա Սալի մէջ, Հ.Մ.Բ.Մ. Պէյրուք իր առաջին մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Շապապ Զուքը:

Հ.Մ.Բ.Մ. Պէյրուքի խմբակին մաս կը կազմեն՝ Ժամհուր, Ռիսէյէ Պէյրուք եւ Շապապ Զուք: Իսկ միւս խմբակին մաս կը կազմեն՝ Ռիատի, Քաֆարչիմա, Պիպոն եւ Ֆաուար Զոլորթա:

Շապապ Զուքի խմբակին մաս կը կազմեն՝ Միլան, Սալիմ Բաբա, Հ.Մ.Բ.Մ. Պէյրուք կը կատարէ երկու մրցում՝ յաջորդաբար

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶԻ ՄԱՐԶԻԿ ՔՈՊԵՂՊՐԱՅԸՆԹ՝ ԴԱՐՁԵԱՂԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

Էն. Պի. Էյ. ի երէկուան մրցումներուն, Լոս Անճելըս Լէյքըրը արձանագրեց այլ յաղթանակ մը, երբ յաղթական վերադարձաւ Սոլթ Լէյք Սիթիէն, ուր 93-87 արդիւնքով պարտութեան մատնեց Եռուս Տէպը, որ իր կատարած վերջին երկու մրցումներուն յաղթանակ արձանագրած էր:

Հակառակ Շաքիլ Օնիլի բացակայութեան, յաջորդաբար երրորդ մրցումն ըլլալով, անոր խմբակից Քուպէ Պրայնթ իր կազմին հետ արձանագրեց յաղթանակ մը, նշանակելով 40 կէտ: Յաջորդաբար 11րդ մրցումն ըլլալով ան կը նշանակէ առնուապէս 35 կէտ, իւրաքանչիւր մրցումի ընթացքին: Անոր խմբակից Տերէք Ֆիշըր նշանակեց 16 կէտ, իսկ Տէպի մարզիկ Քարլ Մալոն՝ 25 կէտ:

Պէյքըրը հանդիսացաւ առաջին խումբը, որ Ա. կիսախաղին նշանակեց 76 կէտ: Յաղթական կազմին



Սելթիքսի մարզիկ Կերի Փէյթըն (թիւ 34)

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:

Տիթթոնիթ Փիթընը - Թորոնթօ Ռեփթըր	89-84
Նիւ Օրլինզ - Ուաշինկթըն Ուիզըրս	87-75
Լոս Անճելըս Լէյքըր - Եռուս Տէպ	93-87
Հիւսթըն Ռոքէթս - Ֆէնիքս Սանզ	107-89
Մինեսոթա Վուլվզ - Տեննիս Նակթիթ	85-77
Ֆիլադելֆիա Սիքսըրզ - Շիքագօ Պոլզ	110-82
Սիէթլ Սուփըրսոնիքս - Նիւ Եորք Նիքս	103-94
Փոր. Թրէյլ Պլէյթըրզ - Կ. Սթ. Ուորիթըրզ	125-98
Լոս Անճելըս Քլիփըրզ - Միլուոքի Պաքս	110-104

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

Ինտիանա Փէյթըրզ - Նիւ Ջըրսի Նեթս	Սան Անթոնիօ Սփըրզ - Տալաս Մալթրիքս
Պոսթըն Սելթիքս - Սաքրամենթօ Բիւնկլ	Ստորեւ՝ դասաորումը:
ՍԵՒԵԼԵՆ ԸՐՁԱՆ	ՅԱՂԹ. ՊԱՐՏ.
(ԱՍԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ)	
Նիւ Ջըրսի Նեթս	36 18
Պոսթըն Սելթիքս	31 23
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	29 24
Օրլանտօ Մեյթը	26 29
Ուաշինկթըն Ռիփթըրս	25 28
Նիւ Եորք Նիքս	23 30
Մայնթի Հիթ	18 36

(ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)	
Տիթթոնիթ Փիթըրզ	37 16
Ինտիանա Փէյթըրզ	37 17
Նիւ Օրլինզ	29 27
Միլուոքի Պաքս	27 26
Աթլանթա Հոքս	20 34
Շիքագօ Պոլզ	19 36
Թորոնթօ Ռեփթըրզ	16 36
Բիլվեյնտ Զալալիթզ	10 44

ՍԵՒԵԼԵՆ ԸՐՁԱՆ	
(ՄԻՋԱՐԵԻՄՏԵԱՆ ԳՕՏԻ)	
Տալաս Մալթրիքս	41 12
Սան Անթոնիօ Սփըրզ	37 16
Մինեսոթա Վուլվզ	34 21
Եռուս Տէպ	32 22
Հիւսթըն Ռոքէթս	28 25
Մեմֆիս Կրիլիթզ	16 36
Տեննիս Նակթիթ	12 43

(ՍԱՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ)	
Սաքրամենթօ Բիւնկլ	37 18
Փորթլենտ Թրէյլ Պլէյթըրզ	35 18
Ֆէնիքս Սանզ	30 24
Լոս Անճելըս Լէյքըրզ	28 25
Կոլորադօ Սթըյօ Ուորիթըրզ	24 30
Սիէթլ Սուփըրսոնիքս	22 30
Լոս Անճելըս Բիլվըրզ	19 34

ԹԵՆԻՍ

ԴԱԲԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՆՑԱԲ Գ. ՅԱՆԳՐՈՒԱՆ

Պուէնոս Այրէսի մէջ (Արժանթին) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին, Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, 2րդ դասում արժանթինահայ Դալիթ Նալպանտեան 6-1 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Ֆրանցօ Սքուիարին (Արժանթին) ապահովեց Գ. հանգրուանին իր տոմարը:



Դալիթ Նալպանտեան

Ա. հանգրուանին իր կատարած մրցումին Նալպանտեան 6-3 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց իր սպանացի Ֆենանտօ Վիչենթին:

Նալպանտեանի նման Գ. հանգրուանին իր տոմար ապահովեց թիւ 1 դասում սպանացի Քարլոս Մոյա 6-2 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք արժանթինցի Էտկարտօ Մասսան:

ՊԵՔԶԱՄՈՎ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ԶԵՆՔ

ԿՐԵՒ ԱՐՍԵՆ ՎԵՆԿԵՐ

Արսենալի մարզիչ Արսեն Վենկեր երէկ մերժեց ընդունիլ բրիտանական մամուլին կողմէ հաղորդուած այն լուրը, թէ ինք Մանչեսթըր Եունայթըթի միջնապահ Տէյվիտ Պէքհամի համար առաջարկած էր 50 միլիոն տոլարի գումար մը:

Բրիտանական «Իվինինկ Սթանտար» օրաթերթը հաղորդած էր, որ Ֆրանսացի մարզիչը այդ գումարը առաջարկած է Մանչեսթըր Եունայթըթի, ձեռք ձգելու համար Պէքհամը, որ անցեալ շաբաթավերջին իր մարզիչէն՝ Ալեքս Ֆերկլարնէն ֆուտբոլի կոշիկ մը «ստացած» էր իր գլխուն:

Վենկեր ըսաւ. «Շատեր Ֆերկլարնէն - Պէքհամ հարցը օգտագործելով կը հրապարակեն տարածայնություններ: Եթէ ուզենք Պէքհամը մեր կազմին միացնել, առաջին հերթին պիտի հաղորդակցինք անոր ակումբին հետ»:

Լէյթընսթոնի մէջ (Լոնտոնի արեւելքը) ծնած Պէքհամ, որ շուրջ 12 տարիէ ի վեր կը բնակի Մանչեսթըրի մէջ, տակաւին երկուքուկէս տարուան պայմանագրութիւն մը ունի ստորագրուած Մանչեսթըրի հետ:

● ՄԱՆՉԵՍԹԵՐԻ պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ իրենց կազմին մաս կազմող արժանթինցի միջնապահ Խուան Սեպասթիան վերոն շատ հաւանաբար ֆուտբոլի դաշտերը վերադառնայ տասը օր ետք, ամբողջութեամբ ապաքինած ըլլալով:

Ալեքս Ֆերկլարնէն, բաւական գոհ մնաց այս լուրին ի տես, որովհետեւ 27 տարեկան միջնապահը բաւական կ'արդարացնէ օտարականի իր կոչումը:

ԿՈՒՉՈՒԻ
Վարպետ ոսկերիչ (սենթեր) մը եւ կապոյտ մոմի վարպետ մը: Դիմել հեռ. 01-252054:

ԿՈՒՉՈՒԻ
Վարպետ ոսկերիչ (սենթեր) մը եւ կապոյտ մոմի վարպետ մը: Դիմել հեռ. 01-242549:

Շեղի կ'ունենայ Հիմզաբքի, 27 Փետրուար 2003, երկուշաբթի ժամը 8:00ին, Հ. Բ. Բ. Ս. ի «Տեմիրճեան» կեդրոնի հանդիսարանին մէջ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԻԾԵՐ - Ժողովարար - տեսաերիզ
Երեկոյի հեղինակ եւ բեմականացում՝ փորձ. ԵՐՈՒՄԱՆԴ ԴԱՉԱՆՃԵԱՆ

«Վ. ՓԱՓԱՉԵԱՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲ

ԱՅՍ ԵՐԵԿՈՅ՝
ՎԱՐՄԱ ՓԱՓԱՉԵԱՆԻ ԸՏ

Հովանաւորութեամբ՝
Հ. Բ. Բ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ


Կազմակերպութեամբ՝
Հ. Բ. Բ. «ՎԱՐՄԱ ՓԱՓԱՉԵԱՆ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲ

Տեղի կ'ունենայ Հիմզաբքի, 27 Փետրուար 2003, երկուշաբթի ժամը 8:00ին, Հ. Բ. Բ. Ս. ի «Տեմիրճեան» կեդրոնի հանդիսարանին մէջ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԻԾԵՐ - Ժողովարար - տեսաերիզ
Երեկոյի հեղինակ եւ բեմականացում՝ փորձ. ԵՐՈՒՄԱՆԴ ԴԱՉԱՆՃԵԱՆ

ԵՐԱԵՐ

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 11

ՓԵՏՐՈՒՄ 2003

bozdig_mezdig@hotmail.com

ԱՄՐՈՂՁ ԱԾՄԱՐՈՂՁ՝ ՏՕՆԻ ՄԷՋ

Ով չի սիրեր տօնական օրերը, արձակուրդը, կերուխումը: Վստահաբար բոլորդ անհամբեր կը սպասեք իրաքանչիւր տունի հետ կապած ուրախութիւններուն եւ սովորութիւններուն: Տօները աւելի հետաքրքրական կ'ըլլան, եթէ տեղեկութիւն ունենանք անոնց մասին:

Քաղաքակրթական ամենէն կարծ ամիսը ըլլալուն, այս տարի Փետրուարը շատ ճոխացած է վանազան տօներով: Փետրուարին չինացիները տօնեցին իրենց Նոր Տարին, իսլամները՝ Ատհան, քրիստոնեաները՝ Տեառնընդառաջը, անշուշտ առանց մոռնալու Բարեկենդանը: Նոյնիսկ սիրահարները տօնեցին սիրոյ տօնը՝ Վէլընթայնը: Իսկ մենք՝ հայերս, անշուշտ որ պիտի տօնենք նաեւ Վարդանանցը:

Եւ, ինչպէս կ'ըսէ հայկական առածը, «Քէֆ ընողին քէֆ չի պակասիր...»:

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

Գիտեմ, թէ ինչպէս ինձի, նոյնպէս ալ ձեզի համար շատ հաճելի են տօները: Բաճելի են, որովհետեւ դպրոցները փակ կ'ըլլան, նոր հագուստներ կը հագնինք, այցելութիւններ կը փոխանակենք: Մէկ խօսքով՝ տօները հաճելի են, որովհետեւ անոնց պատճառաւ ուրախութենէն մենք թեթեւ կը զգանք:

Սակայն տօնը միայն թեթեւ զգալու համար չէ, որ օրացոյցներուն մէջ նշուած է: Տօն բառին ետեւ «պահուած» է անոր իսկական իմաստը: Իսկ ինչպէս դուրս կը բերենք պահուելու ճատ պարզ է: Մեր մեծերուն կը հարցնենք, գիրքեր կը կարդանք իմանալու համար, թէ երբ, ուրկէ եկած է իրաքանչիւր տօնը եւ ինչու կը տօնենք զայն: Այսպէսով ալ չենք բաւարարուիր, տօնական օրուան ընթացքին կը յարգենք

բոլոր սովորութիւնները: Տօն կրնանք կոչել նաեւ մեր տարեդարձները: Մեզմէ իւրաքանչիւրին տարեդարձը ընտանեկան տօն է: Երբ մեր տարեդարձին օրը մեր ազգականներն ու ընկերները մեզ յարգելով կը շնորհաւորեն մեզ, անոնք ըսել կ'ուզեն նաեւ, որ ուրախ են մեր աշխարհ գալով՝ մեր ճնունդով:

Տօնական օրերը անշուշտ միայն անհատական կամ հայկական չեն: Անոնք նաեւ կրնան այլ ժողովուրդներու պատկանիլ: Ինչպէս հայերը, այլ ժողովուրդներն ալ ունին իրենց յատուկ տօները, եւ մենք պէտք է յարգենք նաեւ անոնցը:

Պահ մը երեւակայեցեք, եթէ աշխարհի բոլոր ժողովուրդներուն տօները եւ մարդոց տարեդարձները մէկ օրացոյցի մէջ զետեղէինք, ամէն օր բազմա-



Մարիա Մանկապարտան, Ա. եւ Բ. Արսլանեան ծննդան (7 տարեկան)

թիւ տօներ կ'ունենայինք եւ տարուան ընթացքին բնաւ չէինք աշխատեր: Բաւանաբար այս պատճառով է, որ կը բաւարարուինք միայն մեր ապրած երկրին ու մեր ազգային տօները յիշատակելով:

Տարուան ամէնէն կարծ ամիսն է Փետրուարը: Բայց, ըստ երեւոյթին, հարուստ է հայկական, ազգային կամ օտար տօներով՝ Ատհա, Տեառնընդառաջ, Վէլընթայն, Վարդանանց...: Բոլորին ալ գոյութեան իմաստը փորձենք հասկնալ:

Եւ՝ շնորհաւոր բոլոր տօները:

ՓԵՏՐՈՒՄԻ ԲԱՅԿԱԿԱՆ ՏՕՆԵՐ

ՎԱՐՊԱՆԱՆՑ



451 թուականին Աւարայրի դաշտին մէջ, Տղմուտ գետի ափին տեղի ունեցած Վարդանանց պատերազմը հայոց պատմութեան կարեւոր թուականներէն մէկն է: Այդ պատերազմին Վարդան Մամիկոնեան եւ իր զինուորները պարսիկներու դէմ կռուեցան եւ նահատակուեցան հայրենիքի եւ կրօնի համար:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Երբ Յիսուս 40 օրուան մանուկ էր, Մարիամ եւ Յովսէփ զայն տաճար տարին: Այդ օրը՝ Տեառնընդառաջը, վերահուսեցաւ տօնի:

Բայցը Տեառնընդառաջը կը տօնեն 14 Փետրուարին: Տօնէն մէկ օր առաջ եկեղեցի կ'երթան, խորանէն կը վառեն իրենց մոմերը եւ զանոնք կը տանին տուն: Իսկ եկեղեցիներու եւ




բակերու մէջ կը վառեն մեծ խարոյկ մը եւ անոր վրայէն կը ցատկեն:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդանը հայ ժողովուրդին ամէնէն սիրած տօներէն մէկն է: Բարեկենդանը կը յաջորդէ Ա. Վարդանանց տօնին եւ կը տօնուի մեծ պահքէն առաջ եկող վերջին կիրակի օրը:

Բին ժամանակ Բայաստանի մէջ հայերը Բարեկենդանին օրը կը զուարճանային պարերով, խաղերով, թատրոններով, կատակներով եւ կերուխումով: Այս հանդիսութիւններուն նաեւ սովորութիւն էր ճպտուիլ: Բարեկենդանի առիթով այնքան կ'ուտէին ու կը խմէին, որ տօնը երբեմն կատակով կը կոչուէր «փորեկենդան»:



ملحق أزياءك



ՔԱՊԱՔԱԿԱՆ

ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ

♦ Ճուրջ մեկուկէս ամսուան աշխատանքէ ետք ՄԱԿի ապահովական քննիչներ յայտնեցին, թէ յաւելեալ ժամանակի պէտք ունին յստակացնելու համար կայութիւնը իրաքի հաւաքական քանդումի վէճերու հարցին նկատմամբ: Բակառակ ասոր, Մ. Նահանգներ ամէն ջանք կը թափեն պատերազմելու իրաքի դէմ: Նշենք, թէ անցեալ Ճաբաթ ամբողջ աշխարհի մէջ տեղի ունեցան հսկայական ցոյցեր ո՛չ ըսելու իրաքի դէմ պատերազմի մը:

♦ 1 Փետրուարին «Քոլումպիա» անջրպետանաւը վայրէջքի ճշդուած ժամէն 15 վայրկեան առաջ պայթեցաւ օդին մէջ: Անջրպետանաւուն մէջ կային եօթը աստղանաւորդներ (վեց ամերիկացի, մէկ իսրայէլացի): ՆԱՍԱ (Ամերիկայի Անջրպետի Ազգային Ընկերութիւն) անմիջապէս ձեռնարկեց անջրպետանաւուն մնացորդներուն փնտռութիւն: 42 տարիներու ընթացքին առաջին անգամն է, որ անջրպետանաւ մը վայրէջքի պահուն արկածի կ'ենթարկուի:

♦ Քանի մը օրերու վրայ երկարող ժողովներէ ետք, 28 Յունուարին Լիբանանի խորհրդարանը վաւերացուց 2003ի պետական պիտօճէն (մէկ տարուան ընթացքին պետութեան ճախսելիք եւ ստանալիք գումարներուն ցուցակը):

♦ 28 Յունուարին Իսրայէլի արաբ եւ հրեայ քաղաքացիները ընտրեցին Իսրայէլի պատմութեան 16րդ Քնեսէթը (խորհրդարանը): Ընտրապայքարին մասնակցեցան 25է անլի կուսակցութիւններ, իսկ Քնեսէթի նոր անդամները Իսրայէլի վարչապետ Արիէլ Ճարոնը դարձեալ նշանակեցին վարչապետ:

«ԿՈՄԻՏԱՍ» ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿԸ

Բայրենի նշանաւոր «Կոմիտաս» լարային քառեակը 1 Փետրուարին Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Բոլ» սրահին մէջ տուաւ նուագահանդէս մը:

80 տարուան կեանք ունեցող «Կոմիտաս» քառեակին անդամներն են՝ էդուարդ Թադեոսեան (առաջին ջութակահար), Սուրէն Բախնապարեան (երկրորդ ջութակահար), Ալեքսանտր Կոսեմեան (ալթօ) եւ Արամ Թալալեան (թաւջութակահար): Պէյրութի մէջ իրենց ելոյթին երաժիշտները նուագեցին երոպայի յօրինողներու (Բենտրլի եւ Ճուպերթ) եւ հայ յօրինող էդուարդ Միրզոյեանի քառեակներէն: Բնականաբար երաժիշտները կարենոր բաժին յատկացուցին նաեւ հայ մեծ երաժիշտ Կոմիտասի ստեղծագործութիւններուն:

♦ *Գիտէիր, թէ...*

«Կոմիտաս» քառեակը կը նկատուի աշխարհի վրայ գոյութիւն ունեցող ամէնէն հին քառեակը:

♦ *Ո՞նչ է լարային քառեակը*

Լարային քառեակը դասական սենեկային երաժշտութեան տեսակ է: Սենեկային կը կոչուին դասական այն երաժշտութիւնները, որոնք, ի տարբերութիւն սիմֆոնիք մեծ նուագախումբերու, կը նուագուին փոքր թիւով արուեստագէտներու կողմէ:

Լարային քառեակի արուեստագէտներուն



խմբակը եւս կը կոչուի քառեակ, որովհետեւ կը բաղկանայ չորս երաժիշտէ: Անոնք կը նուագեն լարային նուագարաններ (ջութակ եւ թաւջութակ):

♦ *Երաժիշտները կը պատասխանեն «Պպտիկ-Մպտիկ»ին*

«Պպտիկ-Մպտիկ».- Ռնչպէս կը յաջողիք չորս հոգիով շատ գեղեցիկ կերպով նուագել նոյն երաժշտութիւնը:

«Կոմիտաս» քառեակ.- Կը փորձենք վիրար հասկնալ եւ իրարու նուագածը մտիկ ընել: Նաեւ շատ կ'աշխատինք:

Ամէն մէկս իր առջեւ ունի երաժշտական խափերու տետրակը, եւ փորձերու ժամանակ միշտ կը ջանանք միասին շնչել ու միասին վզալ:



Աւօ Էմիշեան, Ազգ. Արգարեան վարժարան (Թրդ դասարան)




ՄԱՐԶԱԿԱՆ

ՁԻՆԱԾԱԾԿ ԼԵՌՆԵՐՈՒ ՄԱՐԶԱՁԵՒՐ՝ ԴԱՌՈՒԿԱՐԾԱԽՐ

Իւրաքանչիւր եղանակ ունի իրեն յատուկ խաղեր: Իսկ անշուշտ ձմեռան յարմարագոյն մարզախաղը դահուկարձանն է: Սակայն այս մարզախաղը կախեալ է կլիմայական պայմաններէն, յատկապէս Լիբանանի մէջ, ուր ձմեռը կրնայ շատ կարճ եւ մեղմ ըլլալ: Բետեաբար այս մարզախաղի սիրահարներ անհամբեր կը սպասեն ցուրտին ու ձիւնին՝ անմիջապէս ուղղուելու դէպի Ֆարայայի, Ֆաքրայի կամ Արպի դահուկարձանի վայրերը:

...

Գիտէ՞իր, թէ մարդիկ շատ կանուխէն յղացած են ձիւնի վրայ սահելու գաղափարը: Նախապէս դահուկարձանը մարզանք մը չէր, այլ՝ փոխադրուելու միջոց մը: 1850էն սկսեալ է, որ ան կը վերածուի մարզածեի: Բետկհետէ տարածուելով՝ դահուկարձանը կը



դառնայ նաեւ Ողիմպիական խաղերէն մէկը:

...

Եթէ կ'ուզես ձմեռան ձիւնէն օգտուելով դահուկել, դէպի ձիւնածածկ լեռները ուղղուելէ առաջ մի՛ մոռնար քանի մը կարեւոր թելադրանքներ.

• Նախ պէտք է ունենալ (գնել կամ վար-

ձել) դահուկելու յարմար հագուստներ:

• Արեւու ակնոց դնելէ առաջ արեւէն ու հովէն պաշտպանող սեր քսել դէմքիդ:

• Մէջքէն վար հասնող անօրաք մը հագնիլ

• Փափուկ ձեռնոցներ դնել:

• Կերպընկալէ յատուկ կօշիկներ հագնիլ Բարի՛ ժամանց:

Գիտէ՞իր, թէ...

Դահուկները արդէն գոյութիւն ունէին նախապատմական շրջանին: Բնագետներ գտած են ք.Ա. 5000-2500 թուականներէն մնացած փորագրութիւններ, որոնք կը ներկայացնէին իրենց ոտքերուն դահուկի նմանող տախտակներ անցուցած մարդիկ: Այսօրուան դահուկներուն նախահայրերը ունէին մինչեւ 4.5 մետր երկայնք:

ԳԻՏԱԿԱՆ

ՏՈԼԼԻՆ՝ ՔԼՈՆՈՎ ԾՆԱԾ ԱՌԱՋԻՆ ԱՏՆԱԽՈՐԸ

14 Փետրուարին Սկովտիոյ մէջ գիտնականներ վերջ տուին առաջին քլոն եղած ստնաւոր՝ Տոլլի ոչխարի կեանքին: Ան վեց տարեկան էր:

Ըստ անասնաբուծերուն, 1997ին ճնած Տոլլին կրնար ապրիլ մինչեւ 11 - 12 տարեկան, սակայն ան ունեցած է յօդերու բորբոքում, ինչ որ սովորական հիւանդութիւն է մինչեւ վերջ ազարակի մէջ պահուող ոչխարներուն համար:

Գիտնականները տակաւին չեն գտած Տոլլիի մահուան բոլոր պատճառները:

Տոլլին ծնելէն ետք քլոնով ճնած են բազմաթիւ այլ անասուններ (կովեր, մուկեր եւ այլն): 3 Յունուար 2001ին ճնաւ վտանգուած անասուն մը՝ վայրի ջորին, որ կոչուեցաւ Նոահ: Ան երկար չապրեցաւ. սատկեցաւ բորբոքումի պատճառով:

ՔԼՈՆԻՆԿԸ

«Քլոնէյտ» ընկերութիւնը Դեկտեմբեր 2002ին յայտարարեց, որ ճնած է մարդկային առաջին քլոնը՝ Իվ (Եւա): Ան աւելցուց, որ յառաջիկայ ամիսներուն պիտի ծնին նաեւ մարդկային այլ քլոններ: Սակայն «Քլոնէյտը» ոչ մէկ ապացոյց տուած է իր յայտարարութիւնը փաստող:

Ծանօթ է, որ երեխան կը կազմուի արական եւ իգական բջիջներուն միացումով: Քլոնի պարագային այդպէս չէ: Կնոջ մը մարմնէն հակիրթը կ'առնուի, անոր մէջէն կը պարպուի ամէն տեսակ ճիւղային (ժառանգական տեղեկութիւններ փոխանցող) նիւթ, յե-

տոյ գոյութիւն ունեցող էակի մը մարմնին որեւէ մասէն բջիջի մը կորիպը կ'առնուի ու կը վետեղուի կորիպէն բաժնուած հակիրթին մէջ: Ապա յատուկ միջոցներով կը սկսին բջիջները բազմանալ եւ բաժնուիլ: Այս ձեւով կազմուած սաղմը կը դրուի կնոջ մարմնին մէջ: Ինը ամիս ետք կը ծնի երեխան:

Քլոնինկի դէմ կարծիքները երկու տեսակ են. առաջինը կրօնական է: Կրօնական պատճառով քլոնինկի դէմ եղողները կ'ըսեն, թէ այս ձեւը բնական ձեւ մը չէ երեխայ ունենալու եւ Աստուծոյ դէմ արարք մըն է: Իսկ երկրորդ՝ գիտական պատճառներով դէմ եղողները կը յայտնեն, որ մարդկային քլոններ ստեղծող բաւարար տեղեկութիւններ եւ փորձարկումներ չկան տակաւին:

Քլոնինկի համաձայն եղողները կ'ըսեն, թէ քլոնինկի ձեւով կրնան վաւակ ունենալ այն պոլագերը, որոնք այլապէս վաւակ պիտի չունենային: Անոնք նաեւ քլոնինկը կ'ուզեն օգտագործել բժշկական նպատակներու: Խեղ կարծիքներու պարագային պէտք է շեշտել, որ անոնք անպայման մարդկային քլոնինկի համաձայն կրնան չըլլալ: Օրինակ՝ վերջերս Նիւ Եորքի մէջ կատարուած խորհրդածողովի մը ընթացքին, 7 տարիներ առաջ անհամալուծուած դերասան Քրիսթաֆըր Ռիվ («Սիւփըրմէն»ի հերոսը) հաստատեց, որ քլոնինկի գործողութիւնը կարեւոր է առողջապահական շատ մը հարցեր լուծելու, սակայն բացարձակապէս մերժեց մարդկային քլոնինկը եւ ըսաւ, որ պէտք է արգիլուի ու պատժուի:



Գիտէ՞իր, թէ...

Քլոնինկի գործողութիւնը, բացի մարդկային քլոններ պատրաստելէ, կ'օգտագործուի շատ մը հետազօտութիւններու (ճիւղերու սրբագրութիւն, նոր հիւանդութիւններու ուսումնասիրութիւն, նոր գործարաններու կազմութիւն, որոնք կրնան պատուաստուիլ մարդկային մարմնին մէջ):



«ԼՈՐՏ ԱՓ ՏԵ ԴԻՆԿԿ»Է՝ ՕՊԱՆԱԿԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Նորվեյանտական օդանավային ընկերությունը իր օդանավերը վարդարած է «Լորտ ափ տը դինկկ - տը թու թաուլըրը» ժապաւէնի նկարներով: Օդանավերուն վրայ շատ մեծ չափերով նկարուած են ժապաւէնին հերոսներէն երկուքին, ինչպէս նաեւ՝ Նոր Զելանտայի բնութեան նկարները:



Յի մէջ՝ նորվեյանտայի բեմադրիչ Փիթըր Ծէքսընի կողմէ: Ուրեմն, երբ երկինք նայիք, մի՛ վարմանաք, երբ «Լորտ ափ տը դինկկ»ը տեսնէք հոն...

ՍԱԳԵՐԸ ԿԸ ԿՈՐՍՆՑՆԵՆ ԻՐԵՆՅ ԾԱՄԲԱՆ

Ամէն տարի ծերմակ սագերը հիւսիսային Քանադայէն կ'ողողուին դէպի Միացեալ Նահանգներ՝ ձմեռը անցընելու համար աւելի տաք շրջանի մը մէջ: Սակայն այս տարի անոնք ընկերացան իրենց ազգականներուն՝ ծերմակ ծակատով սագերուն եւ անոնց հետ հասան հիւսիսային Եւրոպա: Գարնան, ծերմակ սագերը պիտի վերադառնան իրենց հայրենիքը՝ Քանադա, եւ առանց վնասուած ըլլալու ձմրան ցուրտէն ու բուքէն, պիտի շարունակեն իրենց սովորական կեանքը:



ԾԵՅՔՍՓԻՐ՝ ՍԱՌՈՅՅԻ ՎՐԱՅ

Հիւսիսային Ճուէտի բացօթեայ երկինքին տակ, սառոյցի վրայ բեմադրուած է Ծէքսփիրի թատրերգութիւններէն «համլէթ»ը: -33 ջերմաստիճան ցուրտին տակ թատրոն դիտելը կը փաստէ Ծէքսփիրի նկատմամբ դիտողներուն սէրը: 420 նստարաններ ունեցող «Այս կլոպ» թատրոնին 100 նստարանները շինուած են սառոյցէ: Բարեբախտաբար թատրոնին ծիշդ թովը կը գտնուի պանդոկ մը, որ կ'ընդունի պանապան վայրերէ եկած

պրօսաշրջիկները: Սառոյցի վրայ ներկայացուող «համլէթ»ին տեսողութիւնը մէկ ժամ է: Իսկ դադարի ժամանակ դիտողները հրաւիրուած են տաք ըմպելիներ խմելու: Անհրաժեշտ է, չէ:



ՅԻՍՈՒՍԻ ԱՐՁԱՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԴԺՈՒԱՐ ԾԱՄԲԱՆ ԴԻՈՐԱՅԱԻ

Պրապիլիոյ Աիօ Տէ ժաներօ քաղաքին վրայ հսկող Յիսուսի արձանը (30 մետր բարձրութեամբ), որ կը գտնուի ճովու մակերեսէն շուրջ 710 մետր բարձրութեան վրայ, շինուած է 1931ին: Մինչեւ Յունուար 2003 պրօսաշրջիկներ եւ ուխտաւորներ մեծ դժուարութեամբ կը բարձրանային 215 սանդուխները, որոնք միակ միջոցն էին հասնելու արձանին, անոր տակ գտնուող մատուղին եւ վայելելու հոնկէ երեւոյղ Աիոյի հրաշալի տեսարանը: Ներկայիս արձանին մօտ հասնիլ փափաքողներուն գործը դիւրացած է, որովհետեւ պրօսաշրջական այս նշանաւոր վայրը օժտուեցաւ ելեկտրական աստիճանով եւ վերելակով:

ԿԵՏ ԱՐԷ, ՈՐ ՊԱՆԴՈՒԿԻ ԱՆԷ ԿԸ ԲՆԱԿԻ

Յունուարի վերջերը Միացեալ Նահանգներու Ֆլորիտա քաղաքին ճովեպերը գտնուած է 3.3 մետր երկարութիւն ունեցող եւ 540 քկ. կշռող կէտ մը: Կէտը փոխադրած են քաղաքին... պանդոկներէն մէկը, որուն աւապանը օժտած են աղի ջուրով եւ տաքութեամբ: Սակայն բժշկական քննութիւնները ցոյց տուած են, որ խեղճ կէտը հիւանդ է: Ան կը տառապի արեան տկարութենէ, ջուրի պակասէ եւ վնասուած է անոր դէպի օդը ջուր արձակող



խողովակը: Ներկայիս բժիշկները շատ լաւ կը խնամեն իրենց հիւանդ հիւրը, որ երեք շաբթուան հանգիստէ ետք պիտի վերադառնայ Ատլանտեան ովկիանոս:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱԴՈՐ Գ. ԻՓԷԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ Մ. ԻՇԽԱՆԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ

ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԶՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆ

27 ՓԵՏՐՈՒՄ 2003ԷՆ ՍԿՍԵԱԼ, ԱՄԷՆ ՈՒՐԲԱԹ, ՇԱՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՃԻՇԴ ԺԱՍԸ 8:30ԻՆ, «ՅԱԿՈՐ ՏԵՐ ՄԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԵՋ:

ՅԵՐԵԿՈՅԹ՝
ԿԻՐԱԿԻ
Կ.Ե. ԺԱՍԸ
4:00ԻՆ

ԳԼԽԱՌՈՐ ՊԵՐՍՈՆԱՏՈՐՆԵՐ՝
ԳԵՈՐԳ ԳԵՈՐԳԵԱՆ, ԱՅՏՈ ՄԻՐՈՊՈՆԵԱՆ,
ՍԵՐ ԳԱՆՏՈՂՈՐԵԱՆ, ՅԱԿՈՐ
ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՓՈՂ ՄԻՆՈՍԵԱՆ

Տոմսերը ստանալ՝ Լամազգայիմի գրախանութն, Շաղգոյեան կեդրոն տիպոգրէք Ճէա, Պուրճ Լամուտ - Օպելիցս գրախանութ, Ամբիլիաս եւ Ելոյթի օրերը կիշէն:



ՉՈՐՍ ԹԵՒՈՎ ԲՈՅԱՄՈՂԷՋԻ ԲՐԱԾՈՅ

Չինաստանի մէջ գիտնականներ կատարած են կարելորդ յայտնաբերում մը: Անոնք գտած են հոյամողէպի մը բրածոյի վերածուած (քարացած) մնացորդները:

Այս հոյամողէպը, որ կը պատկանի հոյամողէպներու *Մայրորեփթըր* տեսակին, ունեցած է չորս մեծ թեւեր, շուրջ մէկ մեթր հասակ եւ ապրած է 130 միլիոն տարի առաջ: Ծատ հաւանաբար ան կատարած է փոքր թռչչներ եւ իր թեւերը գործածած է մեծ թափով սահելու համար: *Մայրորեփթըրին* ոտքին փետուրները շարուած են թռչուններու ոտքի փետուրներուն ձեւով: Այս բոլորը կը հիմնաւորեն գիտնականներուն այն ենթադրութիւնը, որ

դարերու ընթացքին թռչունները յառաջացած են հոյամողէպներէն:

Այս բրածոյին յայտնաբերումը աւելի եւս կ'աշխուժացնէ գիտնականներուն այն վէճը, թէ ինչպէս հոյամողէպները վերածուած են



ախորուած թռչուններուն: Կարգ մը գիտնականներու համաձայն, թռչուններուն այս նախահայրերը սահելու ընթացքին հետզհետէ աւելի շատ սկսած են գործածել իրենց թեւերը: Այլ գիտնականներ կ'ըսեն, թէ այս հոյամողէպները իրենց թեւերը գործածած են աւելի արագ վազելու համար եւ

այնքան արագ վազած են, որ ի վերջոյ սկսած են թռչիլ:

Գիտնականները կրնան շարունակել հոյամողէպներու եւ թռչուններու մասին իրենց վէճը: Սակայն կարելորդ այն է, որ այս բրածոյին յայտնաբերումին շնորհիւ անոնք շատ աւելի տեղեկութիւններ պիտի ունենան այս հարցին մասին:

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐ



դէմ: Այս ժապաւէնը լեցուն է բրտութեան եւ պատերազմի տեսարաններով, սակայն ան ունի նաեւ բնութեան շատ գեղեցիկ պատկերներ եւ խորհրդաւոր մթնոլորտ:

♦«*Էյր Պատ 4*». Ծատ շատերու ճանօթ է շարժապատկերի դերասան Պատ շնիկը: Արդէն իսկ պատրաստուած են անոր արկածախնդրութիւններուն եւ հերոսութիւններուն նուիրուած մանկապատանեկան երեք ժապաւէններ, իսկ հիմա կրնաք դիտել նաեւ անոնց չորրորդ բաժինը:

«*Էյր Պատ 4*»ին մէջ Պատ թեւե քիչ մը ճերայած է, սակայն կը յաջողի դարձեալ կռուիլ վատ մարդոց դէմ: Ան այս անգամ իրեն օգնական կ'ընտրէ փոքրիկ Անտրէան:

Բետաքրքրական ժապաւէն մը՝ մանաւանդ «*Էյր Պատ*»ի համակիրներուն համար:

♦«*Լորտ աֆ տը ռինկլ - տը թու թաուըրլ*». Բերոսապատում «*Լորտ աֆ տը ռինկլ - տը ֆելոշիփ աֆ տը ռինկլ*» ժապաւէնին երկրորդ բաժինը՝ «*Լորտ աֆ տը ռինկլ - տը թու թաուըրլ*»ը արդէն հասած է լիբանանեան շարժապատկերի սրահները: Փիթըր Ծէքսընի բեմադրած այս ժապաւէնին մէջ հոպիթ Ֆրոտօ կը շարունակէ իր ընկերոջ՝ Սէմի հետ ուղեւորութիւնը՝ իր իսկական տիրոջ յանձնելու համար գերբնական ուժ տուող կախարդական մատանին: Միւս կողմէ, անոր բարեկամներուն ասպետներու ընկերութիւնը կը շարունակէ պայքարիլ չար ուժերուն



ՌՎ Է ԹՈՒՔԻԷՆ

Ժապաւէնի վերածուած «*Լորտ աֆ տը ռինկլ*» վէպին հեղինակը՝ Ճոն Ռոնալտ Ռէուկ Թոլքիէն ծնած է 1892ին, հարաւային Ափրիկէի մէջ: Առողջապահական պատճառներով ան փոքր տարիքէն իր մօր հետ կը հաստատուի Անգլիա:

Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին (1904-1918) Թոլքիէն բանակի կ'անդամագրուի: Սակայն ան կը հիւանդանայ եւ կը ստիպուի վերադառնալ տուն, ուր կը սկսի գրել:

1921ին Թոլքիէն անգլիական գրականութիւն կ'ուսուցանէ նշանաւոր Օքսֆորտ համալսարանին մէջ: 1937 Սեպտեմբերին ան կը հրատարակէ «*Պիպլօ տը հոպիթ*» վէպը, զոր գրած է իր վաւականներուն համար: Գիրքը կը գտնէ շատ մեծ յաջողութիւն:


Երբ իր հրատարակիչը կը պահանջէ վէպին շարունակութիւնը, Թոլքիէն տասներկու տարի կ'աշխատի եւ կը գրէ «*Լորտ աֆ տը ռինկլ*» վէպը: Գիրքը լոյս կը տեսնէ 1954ին, սակայն մարդիկ տարիներ ետք վայն կը սիրեն եւ կը փնտռեն: Դժբախտաբար Թոլքիէն չ'օգտուիր «*Լորտ աֆ տը ռինկլ*»ի յաջողութենէն: Ան կը մահանայ 1973ին:

ԽՆՉ Է ԲԵՐՈՍԱՊԱՏՈՒԱԸ


Բերոսապատումը կամ՝ *հիրոիք ֆէնթըրսին* գրականութեան տեսակ մըն է, որ սկսած է տարածուիլ Թոլքիէնի վէպերուն շնորհիւ:

Այս տեսակի բերոսական վէպերուն պատմութիւնները տեղի կ'ունենան շատ իրայատուկ եւ կախարդական մթնոլորտի մը մէջ: Դէպքերը կը պատահին ընդհանրապէս միջին դարերուն եւ անոնց հերոսները անպատճառ բան մը փնտռելու համար ուղեւորութիւն կը կատարեն:


Այս պատմութիւններու աշխարհին մէջ յաճախ գոյութիւն ունին կախարդական առարկաներ, անտառներ եւ լեռներ: Բերոսները պատրաստ են կռուելու չար ուժերուն դէմ: Անոնց կ'օգնեն թզուկներ, բարի պարիկներ եւ գերբնական ուժեր:




1.- Կրնա՞ս օգնել Պլատիկ-մպտիկին, որ կարենայ մինչեւ նշանակակետը հասնիլ:





2.- Կրնա՞ս օգնել Պլատիկ-մպտիկին՝ գտնելու համար իր իկլուէն պակսող կտորը:



3.- Կրնա՞ս ամբողջացնել հաշիւները:



4.- Կրնա՞ս գտնել, թէ Պլատիկ-մպտիկ ո՞ր երաժշտական գործիքը կը նուագէ:



5.- Կրնա՞ս ամբողջացնել տախտակը՝ իւրաքանչիւր պատկերի անունը գտնելով եւ վայն պետեղելով անոր համապատասխանող տուփիկին մէջ:

ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ապրակ»ի Ճարաթ, 22 Փետրուար 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ ՅԷՆ 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 10

1.- Նշէ՛ Փետրուարին տօնուող հայկական երեք տօներ:-----

2.- Նախապէս դահոյկը ի՞նչ նպատակով գործածուած է:-----

3.- Լարային քառեակ մը քանի՞ երաժիշտէ կը բաղկանայ:-----

Անուն - Մականուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 10Ի ԾԱԳՈՂԸ

Բարցարան թիւ 10ի շահողը Արամ Պարստանեան (13 տարեկան «Ա. եւ Բ. Արսլանեան Ճեմարան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ապրակ»էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



ՁԻՒՆԵՐՈՒ ԹԱԳՈՒԿԻՆ ԵՒ ՍԱՌՈՅՅՆԵՐՈՒ ԹԱԳԱԽՈՐՐ



Ձիւներու թագուհին կը բնակէր պսպղուն սպիտակ ծիւնով շինուած պալատի մը մէջ: Պալատը պաշտպանուած էր հսկայ ծիւնամարդու մը կողմէ, որ կատաղօրէն ծիւնագընդակ կը նետէր անոր մօտեցողներուն:

Ձիւներու թագուհին ունէր մոգական մատանի մը, որ կինք զօրաւոր կը դարձնէր: Ան շատ կը սիրէր ամբողջ շրջանը ծածկել ծիւնով: Ոչ միայն կը վայելէր այդ գեղեցիկ տեսարանը, այլ նաեւ կը կարծէր, թէ հաճելի է մարդիկը անհանգստացնել ծիւնով: -

Բլուրին միւս կողմը կ'ապրէր սառոյցներու թագաւորը, որուն պալատը ամբողջութեամբ շինուած էր շարք-շարք դասուած սառոյցի սրածայր կտորներով: Թագաւորը կը նախանձէր, որ իր դրացին կրնար այդքան տակնուվրայութիւն ստեղծել եւ կ'ուզէր տիրանալ անոր մոգական մատանիին: Երկար մտածելէ ետք, սառոյցներու թագաւորը իր հաւատարիմ եղիամին հետ ուղղուեցաւ Ձիւներու թագուհիին պալատը:

Ձիւնամարդը տեսաւ կանոնք, պատրաստուեցաւ ծիւնագնդակ մը նետելու, սակայն Սառոյցներու թագաւորը պռռայ. «Կա՛յ:

Աշակերտները ծիւնամարդ շինելու մըցում ունին եւ կ'ուզեն, որ դուն ըլլաս թագաւորը»:

Ձիւնամարդը եւ հիւսիսային հովը ածապարանքով մեկնեցան, իսկ Սառոյցներու թագաւորը եւ եղիամը լծուեցան գործի: Անոնք շուտով պալատին մուտքը ճածկեցին սառոյցի հաստ խաւով: Քիչ ետք Ձիւներու թագուհին որոշեց դուրս ելլել եւ քիչ մը աւելի ծիւն տեղացնել: Սակայն հապի բայլ մը առած՝ ան սահեցաւ եւ գետին ինկաւ: Մոգական մատանին սահեցաւ անոր մատէն:

Սառոյցներու թագաւորը խլեց մատանին, դրաւ իր պաղ մատին. «հիմա ես եմ ամէնէն հզօր անձը», պռռայ ան եւ եղիամին հետ անհետացաւ անտառին մէջ:

Յաջորդող քանի մը օրերուն Սառոյցներու թագաւորը սքանչելի ժամանակ անցուց: Սառնամանիք էր. օդը հետզհետէ աւելի ցրտեց: Ինքնաշարժներ ծամբաներուն վրայ սահեցան եւ ջուրի խողովակներ ծաթեցան: Տանիքներէն հոսող ջուրը սառոյցի վերածուեցաւ եւ մարդիկ ամուր փակեցին դուռ ու պատուհան:

Սառոյցներու թագաւորը երջանիկ էր, սա-

կայն ան ուզեց տիրանալ նաեւ Ձիւներու թագուհիին պալատին: Անգամ մը եւս Սառոյցներու թագաւորը եւ եղիամը ծամբայ ելան դէպի բլուրին միւս կողմը, սակայն Ձիւներու թագուհին եւ իր զօրքը պատրաստ կը սպասէին անոնց:

Պատերազմը սկսաւ Ձիւներու թագուհիին պալատին տիրանալու համար եւ ծիւնամըրրիկն ու փոթորիկը յաջորդեցին իրարու: Մարդիկ չէին հասկնար, թէ ինչ կը պատահէր: Կռիւի ժամանակ Ձիւնամարդը սահեցաւ ու ինկաւ: Յաղթական Սառոյցներու թագաւորը բարձրացուց իր սուրը եւ մատանին ինկաւ անոր ձեռքէն:

Ամէն ոք արձանացաւ, երբ արեւը իր ճառագայթը երկարեց, երկարեց... յափշտակեց մատանին եւ իր մատը անցուց: «հիմա ես եմ ամէնէն զօրաւորը», - ըսաւ ան. - «բաւական վայելեցինք այս ցուրտ օդը: Ասկէ ետք գարուն պէտք է ըլլայ»:

Արեւը իր տաք մատներով դպաւ Սառոյցներու թագաւորին, Ձիւներու թագուհիին եւ անոնց օգնականներուն, որոնք մէկ առ մէկ հալեցան:

TEAMS, TEAMS, TEAMS

Brazil, France and England;
Spain, Italy and Poland;
Those are just a few.

Japan, China and Macedonia;
Are friends with my Armenia.

And last of all, I like football.

Սարո Սաֆիե-Կարապետեան
էմերիթըն Բոմինիթի Սթու
Յ տարեկան

Նարինէ
Գրիգորեան
Գէորգ Բարպոյեան
Ս. Ռաչ վարժարան
9 տարեկան



Նաթալի Սազարեան, Սուրէն Ռանամիրեան (4րդ դասարան)



Սերժ Տէր Մարտիրոսեան, Ալգ. Սրբոյ Քառասնից Մանկանց
վարժարան (Ե. դասարան)

Computer Echo

Echo PC With The Intel® Pentium® 4 Processor. The Center Of Your Digital World

The Sky Is The Limit

Take Outstanding Digital Photos
Play Intense 3-D Games
With Echo PC And The Intel® Pentium® 4 Processor

Computer Echo s.a.r.l. Lebanon
Tel 1-488106(15 lines) Fax 488109
Cell 734298 / 624714
e.mail echo@dm.net.lb
Saloumeh Hyway Ariss Center Beirut Lebanon

Echo Dubai L.L.C. UAE
Khaled Bin Al-Waleed St.
Mohd Sultan Belshalet Bldg.
Tel 971-4-3830091 Cell 971-5-4544072
E.mail echodxd@emirates.net.ae

2001 Intel Corporation, All Rights Reserved, Intel Inside Logos, pentium 4 processor logo and Intel Netburst are trademarks of Intel corporation or its subsidiaries in the united states and other countries. Other brands and trademarks are the property of their respective owners.



Փարիլ Գալենտերեան, Գէորգ Բարպոյեան Ս. Ռաչ վարժարան
(9 տարեկան)

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝
bezdig_mezdig@hotmail.com
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի
խմբագրութեան, «ԱՋԴԱԿ», «Ճաղկոյեան» կեդրոն